Azg
Ազգ
30 ՕԳՈՍՏՈՍ 2008 ՇԱԲԱԹ 157 (4051)

Սերժ Սարգսյանը կմեկնի ԱՄՆ, մինչ այդ կհանդիպի Դմիտրի Մեդվեդեւի հետ

Վաշինգտոնից «Ազգի» բարեկամները տեղեկացրել են, որ, ըստ իրենց լուրերի, Նախագահ Սերժ Սարգսյանը սեպտեմբերի 24-ին կլինի Նյու Յորքում, որտեղ սեպտեմբերի 25-ին ելույթ կունենա ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում: Իսկ մինչ այդ, հաղորդում են Նախագահի նստավայրից, Սերժ Սարգսյանը սեպտեմբերի 2-ին աշխատանքային այցով կմեկնի Սոչի: Սոչիում Հայաստանի Հանրապետության Նախագահը հանդիպում կունենա Ռուսաստանի Դաշնության Նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ: Հանդիպման ընթացքում կքննարկվեն հայ-ռուսական բազմավարական գործակցության հետագա զարգացմանը, առաջիկայում հավակական անվտանգության ոլորտում կազմակերպությունում՝ Հայաստանի նախագահության սահմանմանը վերաբերող, ինչպես նաեւ տարածաշրջանային ու միջազգային հարցեր:

70 հազար դրամ՝ էլի ինչքան ուսուցիչների աշխատանք կորցնելու հաշվին

ԳԵՂԱՄ ՄՈՒՐՏՈՅԵՆ

Դպրոցական նոր ուսումնական տարվա մեկնարկից առաջ ուղղագծվող իրավիճակում հոգու հրամայական պարտք ենք զգում խոր մտահոգությամբ ու տագնապով դիմելու հանրապետության կառավարության ու կրթության գործի պատասխանատուներին: Ասենք սիրուն, բայց հեռ վերցրեք այս սեպտեմբերի 1-ից ուսուցիչների աշխատավարձը անպայման 70 հազար դրամի հասցնելու մեր ցված հրաման-պարտադրանքը (եթե հարցադրումն իրոք այդպիսին է), որի գինը նորից բաց ուսուցիչների անխուսափելի մաղումը կլինի...

Վերջին մի քանի տարիներին ամեն մոտեցող սեպտեմբերի 1-ը ահավոր սուր է՝ կախված մեր այս կամ այն թվով ուսուցիչների, հաղթային ու գյուղական այս կամ այն դպրոցի գլխին, որովհետեւ անգամ ահուդողով սպասում են՝ այս տարի ինչ է լինելու, շարունակելո՞ւ են աշխատել, դասարաններ, դասաժամեր ունենալո՞ւ են, թե ոչ: Մեր տպավորությամբ՝ այդպես է համենայն դեպս Շիրակի մարզում, որին առանց այդ էլ արդեն ամենից բաց է հասել «օպտիմալացման» բարիքից եւ որի օրինակը բավական խոսուն է: Այստեղ 2003-2004 թթ. բուռն օպտիմալացման շրջանում մարզկենտրոն Գյումրիում մեկ տասնյակի չափ դպրոց է փակվել, եւ մեկ դպրոց էլ՝ Արթիկում, իսկ դրան ի հավելումն նաեւ ներդպրոցական, այսինքն՝ գործող մնացած դպրոցների ներսում իրականացված «օպտիմալացման» արդյունքով մի զարկով պակասել է եւս 182 դասարան... Դա դեռ այդ ժամանակ մարզի շուրջ 1000 մանկավարժի գործազրկում է արժեցել, իսկ 2004-2005 ուսարում դրված էր եւս 600-ից ավելի ուսուցիչների, ներառյալ մեծ թիվ կազմող բարձրագույն մասնագիտական կրթությամբ մանկավարժների աշխատանքից ազատման խնդիրը, որը նույնպես պետք է կարծել, որ հիմնականում իրականացվել է: Այսպես՝ միայն մի մարզում:

Տես էջ 2

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Վրաց-ռուսական միայն հյուպատոսական հարաբերություններ

Ռուս-ամերիկյան խաղիկներդ՝ վրացական թեմատիկայի շուրջը

ԱՌԱՔԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վրաստանը խզում է հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ պահպանելով միայն հյուպատոսությունը: Երեկ նման հայտարարություն է տարածել Վրաստանի արտգործնախարարությունը, պարզաբանմամբ, որ այսուհետեւ ինչպես Վրաստանի ընդդեմ ներկայացուցչությունը Ռուսաստանում, այնպես էլ Ռուսաստանի ներկայացվածությունը Վրաստանում կսահմանափակվեն միայն հյուպատոսական աշխատանքներով, առանց մինչ այդ իրականացված քաղաքական գործունեության:

Ռուսաստանի արտգործնախարարությունն էլ, իր հերթին, հանդես է եկել հայտարարությամբ, նշելով, որ Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների խզման դեպքում որեւէ պատասխանատվություն չի կրում, այլ այն ամբողջությամբ ընկնում է վրացական կողմի վրա: Ռուսական կողմի պարզաբանմամբ, առանց դիվանագիտական հարաբերությունների «դժվարություններ կառաջանան միմյանց տեսակետները դիմացինին հասցնելու հարցում», բայց այդօրինակ հարաբերությունների խզման դեպքում, ըստ ՌԴ արտգործնախարարության, ընտրությունը չի լինի Ռուսաստանինը, ուստիեւ չի լինի նաեւ այդ որոշման համար պատասխանատվություն:

Այս կողմից, շարունակվում է տարբեր երկրների տարբեր մակարդակի գերատեսչությունների հայտարարությունների հոսքը, որ մտահոգություն ու դժգոհություն արտահայտող եվրոպական կառույցների հայտարարություններից բովանդակությամբ ու արտահայտաձեւերով չի տարբերվում:

Տես էջ 3

Մակֆեյնը հայտնեց իր փոխնախագահի թեկնածուի անունը

ԱՄՆ-ը ընտրություններում հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Ջոն Մակֆեյնը նախագահի աթոռի համար պայքարում, որպես փոխնախագահի թեկնածուի առաջարկել է Ալյասկայի նահանգապետ Սառա Պալինին: Վերջինս 44 տարեկան է, 5 երեխաների մայր եւ Ալյասկայի պատմության մեջ առաջին կին նահանգապետը: Պալինի թեկնածությունը հանրապետական կուսակցությունը պետք է պաշտոնապես հաստատի Մակֆեյնի թեկնածության հետ սեպտեմբերի 4-ին Մինեսոտայում հաղորդում կայանալիք համագումարի ժամանակ:

Կոնգրեսը դադարեցնում է նստացույցը եւ հեռաձգում հանրահավաքը

Հայ ազգային կոնգրեսը հայտարարություն է տարածել, որում մասնավորապես ասված է, որ «Սեպտեմբերի 6-ին նշանակված ֆուտբոլի աշխարհի առաջնության որակավորման փուլի Հայաստան-Թուրքիա խաղի եւ պատշաճորեն հայտարարված՝ Հայաստան 20-25 հազար թուրք ֆուտբոլասերների ժամանման առիթով կառավարությունը կայացրել է մի ինչ-որ որոշում, որով մարդու իրավունքների եւ ազատությունների հակասահմանադրական սահմանափակումներ է մտցրել, ինչպիսիք սահմանադրությամբ նախատեսվում են միայն արտակարգ դրության պայմաններում: Միեւնույն ժամանակ, մենք հասկանում ենք առանձնահատուկ այս դեմքում հասարակական կարգի ու անվտանգության պահպանման լրացուցիչ միջոցառումների անհրաժեշտությունը: Նման դեպքերում ժողովրդի վստահությունը վայելող լեգիտիմ իշխանությունը դա կարող էր անել բոլորովին այլ կերպ, առանց Սահմանադրությունը եւ իր հաղթացիների իրավունքները ոտնահարելու, մասնավորապես՝ խնդրանքով դիմելով հասարակական ու հաղթական կազմակերպություններին՝ ձեռնպահ մնալ այդ օրերին զանգվածային միջոցառումների կազմակերպումից»: Հայտարարության մեջ ասվում է նաեւ, որ «օգոստոսի 31-ից, ժամը 23-ից դադարեցնում է Հյուսիսային պողոտայում հուլիսի 4-ից շարունակվող երկարաձգյալ նստացույցը: Սեպտեմբերի 5-ին նշանակված համահանրապետական հանրահավաքը տեղափոխում է հաջորդ ուրբաթ՝ սեպտեմբերի 12-ին: Մինչեւ սեպտեմբերի 12-ը Հյուսիսային պողոտայում կանցկացվեն միայն «հաղթական զբոսանքներ» երեկոյան ժամը 19-22-ը:

Մեքենաների տեխզննման վերջնաժամկետը դեկտեմբերի 31-ն է

Կառավարության որոշմամբ հաղթացիներն իրենց տրանսպորտային միջոցները կարող են տեխնիկական զննության ենթարկել մինչեւ 2008-ի դեկտեմբերի 31-ը: Այդ մասին հրավիրած ասուլիսում ասաց Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Մարգար Օհանյանը՝ միաժամանակ հերքելով շրջանառվող այն լուրերը՝ թե տեխզննության վերջնաժամկետը օգոստոսի 31-ն է: Ճանապարհային ոստիկանության պետը նաեւ հիշեցրեց, որ այս տարվա հունվարի 1-ից տեխզննության կետերի նկատմամբ իրենք վերահսկողություն սահմանելու իրավասություն չունեն, քանի որ դրանք տրված են մասնավոր ընկերություններին:

«Բոլորս միեւնույն հողի զավակներն ենք»

Պատասխան հարցազրույցում «Ռադիկալին» ասել է Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը

Թուրքական «Ռադիկալ» թերթը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը հրապարակել էր օգոստոսի 28-ի համարում: Երեկ «Ազգում» բարգմանաբար լույս տեսած եւ թուրքական զանգվածային լրատվամիջոցներում լայն արձագանք գտած հարցազրույցը վարել էր Մուրադ Եթիմը: Հայաստանի նախագահի հարցազրույցի հրապարակման օրը նույն եթիմը դրա գնահատականն ստանալու ակնկալիքով դիմել է Թուրքիայի նախագահին եւ հարցերին պատասխանելիս, թուրք լրագրողի արտահայտությամբ, «Սերժ Սարգսյանի նման պատմական ուղերձներ է հղել նաեւ Աբդուլլահ Գյուլը»:

«Բոլորս միեւնույն հողի զավակներն ենք» վերնագրով օգոստոսի 29-ին «Ռադիկալում» հրապարակված նախագահ Գյուլի հարցազրույցը բարգմանաբար ներկայացնում ենք ստորեւ:

Տես էջ 3

Ղարաբաղը չի պատրաստվում ճանաչման հարցով դիմել Ռուսաստանին

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Արցախի հաղթական ուժերը՝ խորհրդարանական եւ արտախորհրդարանական, վերջապես օգոստոսյան թմբիրից արթնացել են եւ անմիջապես ձեռնամուխ եղել Հյուսիսային Կովկասում ստեղծված իրավիճակի ու ԼՂՀ անկախության ճանաչման հեռանկարների ենթարկմանը:

Երեկ Ազգային Ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախաձեռնությամբ Աժ փոքր դահլիճում, փակ դռների հետեւում, տեղի է ունեցել «կլոր սեղան»: Թեեւ ինչ խնդիրներ են այնտեղ ենթարկվել՝ «կլոր սեղանի» ավարտից հետո լրագրողներին մասամբ ներկայացրին խորհրդարանի պատգամավորական խմբակցությունների ղեկավարները:

Վերոհիշյալ հանձնաժողովի նախագահ, Արցախի ժողովրդավարական կուսակցության պատգամավորական խմբակցության ղեկավար Վահրամ Աթանեսյանը, որ թերեւս միակ կուսակցական գործիչն էր, որը վրաց-օսական ճգնաժամի անցած ժամանակահատվածում հրապարակային տեսակետներ է արտահայտել տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ, լրագրողներին տեղեկացրեց, որ «կլոր սեղանի» մասնակիցները պայմանավորվել են մի քանի օր հետո դարձյալ հավաքվել, այս անգամ ԼՂՀ արտգործնախարարի մասնակցությամբ: Պատգամավորի խոսքով, հաջորդ ենթարկումները հիմք կծառայեն խնդրո առարկայի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

«Հայրենիք» խմբակցության ղեկավար Արթուր Թովմասյանի համոզմամբ՝ անհրաժեշտ է հարցը մտցնել Աժ օրակարգ: Նա կարծիք հայտնեց, որ Արցախի խորհրդարանը պետք է ճանաչի Կոսովոյի, Հարավային Օսիայի եւ Աբխազիայի անկախությունը, եւ քանի որ ԼՂՀ պետական ատրիբուտները ոչնչով չեն զիջում հիշյալ երկրներին, ուստի նույն [illegible] պետք է կիրառվեն նաեւ Ղարաբաղի [illegible]:

Տես էջ 2

ԸՆԹԱՑԻԿ

ԱԺ փոխնախագահը՝ Հայաստանի եւ տարածաշրջանի ներկա իրավիճակի մասին

«Հայաստանը չի կարող անմասն մնալ նմանատիպ զարգացումներից, թեեւ, անկախ մեր կամքից, ամեն ինչ ազդում է մեր իրավիճակի վրա, մեզ ոչարահարում է որոշակի քաղաքական թելադրանքների ներքո հաղթական կեցվածքներ դրսեւորել: Առիթն իսկ մեր բնակչությունը զգացել է Վրաստանի դեմքերի ազդեցությունը՝ հատկապես վառելիքի ճանապարհման առումով: Հույս ունենք, որ տնտեսական իմաստով դեմքերը հիվանդագին ազդեցություն չեն ունենա մեզ վրա», երեկ «Հայաստ» ակումբում իր տեսակետները հայտնեց ՀՀ ԱԺ փոխնախագահ Հրայր Կարապետյանը:

Նրա ճառուցմամբ՝ ուշադրություն է դարձվում երկրորդ բնեռը, եւ այդ ամենը կարող է շատ ու շատ քաղաքական ուղղումներ մտցնել միջազգային գործընկերների մեջ, եւ Հայաստանն ունենալով իր ազգային ինքնատիպ շահերը, այնպես պետք է անի, որ ստեղծված իրավիճակում չտուժի:

«Թեեւս ակումբում զսնվող լսարանին ավելի շատ հետաքրքրող Հայաստանի ներքաղաքական իրավիճակը, մասնավորապես այն, որ երբեմն ասվող լուրերի համաձայն ԱԺ նոր նախագահ է դառնալու ՀՅԿ-ից Հովիկ Աբրահամյանը: Հրայր Կարապետյանը նկատեց, որ ՀՅԿ-ն լինելով խոշոր քաղաքական ուժ, իմն է որոշելու, թե ով է զբաղեցնելու խորհրդարանի ղեկավարի պաշտոնը, քանի որ խոսալով այդ պաշտոնը պահպանում է ՀՅԿ-ին:

Ինչ վերաբերում է Արցախի անկախության 17-ամյակին նվիրված ՀՅԴ հանդիսավարին, որ քաղաքական արգելել էր, սակայն դասարանը բավարարել էր քաղաքական վիճակող հայը, որ ներկայացրել էր ՀՅԴ-ն, ԱԺ փոխխոսնակն այսպես մեկնաբանեց. «Քաղաքականությունը մերժել էր, պաշտպանելով, որ սեպտեմբերի մեկին եւ երկուսին-լինելու են գիտելիքին նվիրված միջոցառումներ: Դասարան դիմելով՝ պարզեցին, որ վերջիններիս պաշտպանությունները անհիմն են. որեւէ միջոցառում նախատեսված չէ ժամը վեցից հետո՝ գիտելիքի օրվան նվիրված: Ես չեմ ուզում զուգահեռներ բերել ՀՀԾ-ի եւ մեր միտինգների միջեւ, բայց ես կարծում եմ, որ որեւէ հայ պատասխան չտրեմ է մեր ազգացնի մերժել Արցախի ստեղծարարի միջոցառումը»:

Կարապետյանը եւս մեկ անգամ անդրադառնալով Հարավային Օսիայի եւ Աբխազիայի անկախության ճանաչմանը կամ այդ պետություններին ՀԱՊԿ-ի մեջ ներառելուն, նշեց, որ Հայաստանը պետք է այդ ամենը դիտարկի Ղարաբաղի ինքնորոշման ճանաչման համատեքստում: Նրա կարծիքով, անտեսվում է մի կարեւոր հարց եւս՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի հետագա ճակատագիրը:

Ինչ է լինելու Ղարաբաղի հակամարտության գործընթացը, եթե Ռուսաստանն Արեւմուտի հետ հարաբերությամբ պայմանավորված, դադարեցնի իր մասնակցությունը Մինսկի խմբին. հարցին ի պատասխան Հրայր Կարապետյանը ասաց. «Դիմա պարզ չէ՝ Ռուսաստանը կդաշնակավարի՞ Մինսկի խմբում, եւ եթե Մինսկի խմբի բանակցային գործընթացները կանգնած են փակուղու առջեւ, այս պարագայում Ռուսաստանի ու Արեւմուտի հարաբերությունների առումով լուրջ մտորելու առիթ պետք է ունենանք: Ինչո՞ւ մինչեւ հիմա Արցախի անկախությունը չի ճանաչվել: Միայն այն պատճառով, որ Մինսկի գործընթացը ավարտված չէ», ասաց Կարապետյանն ու հավելեց, որ այդ դեմքում գուցե արժե, որ Հայաստանը ճանաչի ԼՂՀ անկախությունը, քանի որ այդ քայլից ձեռնպահ է մնում միայն կարգավորման գործընթացը չտապալելու համար, մինչդեռ եթե Մինսկի խումբ չկա, չկա նաեւ կարգավորման գործընթաց:

Հրայր Կարապետյանը հերքեց նաեւ ԺԿ ղեկավար Տիգրան Կարապետյանի արտահայտած այն միտքը, թե ՀՅԴ-ն Ռոբերտ Քոչարյանի հետ պայմանավորվել է կազմակերպել նրա վերադարձը քաղաքականություն՝ Տիգրան Սարգսյանին պատճառելով. «Ցեմ բացառում Ռոբերտ Քոչարյանի վերադարձը քաղաքականություն, բայց նաեւ չեմ համարում, թե տուսով վարչապետը հրաժարական է տալու: Տիգրան Սարգսյանը լավ է սկսել որպես վարչապետ, բայց նաեւ գնահատում եմ Ռոբերտ Քոչարյանին՝ որպես քաղաքական գործչի»:

ՆԱՐԵՌ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Օգոստոսի 31-ը Զորավար Անդրանիկի հավերժության տարեդարձի 81-րդ օրն է

«Աշխարհի մեջ մեն-մենակ եմք: Բավական է այդ մենակությունը, որ մեր թուլությունը զրահ եւ պողպատ հագցնի»:
Զ. Անդրանիկ, Կարին, 1918 թ.

Որեւէ իմաստություն եւ խորհուրդ կա հերոսի պատգամի մեջ: Եվ այսօր էլ հերոսի վերոհիշյալ միտքը եւ բազում այլ ասույթները պետք է ուղղորդում լինեն մեր ղեկավարներին եւ հասցեն հայ ժողովրդին՝ ի մի գալու եւ ազգովին խելամիտ դիմագրավելու արտաքին ճնշումները...

Զորավարի հիշատակի օրը հարկ եմք համարում անդրադառնալու հերոսի մի պատգամին, որի իրականացման համար որեւէ բարդություն չենք տեսնում, բացի բարի կամեցողությունից եւ պրոֆեսիոնալ մոտեցումից:

Հայտնի է, որ Զորավարը, երբ հարկադրյալ հեռանում էր հայրենիքից, իր մոտ եղած ողջ գումարը՝ 60 հազար ռուսական ոսկին հանձնում է Գեւորգ Ե կաթողիկոսին, պատգամելով 45 հազարով հոգալ էջմիածնում ծվարած գաղթականների հոգսերը, 15 հազարն էլ պահել անկախ Հայաստանի հրատարակներից մեկում իր հեռ ոստիի դեմ տասնամյակներ մաքառած, կռիվներում զոհված անգերեզման զինվորների հիշատակին հուշարձան կառուցելու նպատակով (ինչպիսի երախտագիտություն եւ հեռատեսություն...)

«Զորավար Անդրանիկ» հայոց համազգային միության անունից արդեն մի քանի տարի է, ինչ դիմել եմք Երեւանի քաղաքապետարան, Ս. Էջմիածին, հայտնելով, որ ունենք արժեքավոր հուշարձան եւ առաջարկում-խնդրում եմք, որ այն տեղադրվի Երեւանում կամ Էջմիածնի վանքի տարածքում, սակայն առ այսօր առաջարկը իրականացմանն է սպասում:

«Զորավար Անդրանիկ» միությունը նորից է հայտնում, որ 18 տարիներ խնամքով պահպանված մեծարժեք հուշարձանը արժանի է, որ տեղադրվի Զորավարի արժանավոր զինվորների հիշատակին: Մեր միության նախագահության անդամների (մասնավորապես մտավորականներ) համոզված կարծիքն է, որ նշված հուշարձանի համար հարմարավետ տեղ է Զորավար Անդրանիկի ծիարձան-հուշարձանի եւ Ս. Գ. Լուսավորիչ եկեղեցու միջանկյալ տարածքը: Այդ քայլով վերջ կդրվի հիշյալ հուշարձանի եւ եկեղեցու միջանկյալ տարածքի աղբատեղ եւ անխնամ վիճակին, եւ ինչպես շատ երկրներում (մասնավորապես Բուլղարիայում), Երեւանում նույնպես կկայանա անցյալի ազատագրական պայքարի մարտիկների՝ ֆիդայիների պոտակ: Շնորհակալություն հայտնելով

«Ազգ» օրաթերթին Զորավարի հիշատակի օրերին միշտ այալորջ լինելու համար, հայտնում եմ նաեւ Զորավարի համակիրներին, որ օգոստոսի 31-ին ժամը 10.30 Երաբլուրում խնկարկվելու է Զորավարի անմոռաց հավերժ փառք հերոսների հերոս Զորավար Անդրանիկին:

ԼԵՎՈՆ ՄՈՒՇԵՂՅԱՆ,
«Զորավար Անդրանիկ» միության նախագահ

Ղարաբաղը չի պատրաստվում ճանաչման հարցով դիմել Ռուսաստանին

1-ին էջից

Նա միաժամանակ շեշտեց, որ Ղարաբաղը պետք է մարդասիրական օգնություն ցույց տա Հարավային Օսիային, մասնավորապես, շինարարության եւ առողջապահության ոլորտներում:

Հավելելով գործընկերոջ ասածին՝ Վահրամ Աթանեսյանն իրազեկեց, որ հարավկովկասյան պետական նոր կազմավորումների ճանաչման հարցը կլսվի ԱԺ աշնանային նստաշրջանում:

«ՀՅԴ-Շարժում-88» խմբակցության ղեկավար Արմեն Սարգսյանը նույնպես հավաստիացրեց, որ քաղաքական ուժերի միջեւ ընդհանուր տեսակետներն առկա են: Այն կոմպրոմենսար քաղաքականությունը, որը վարում էր ԼՂՀ-ն մինչ այդ, պետք է շարունակվի նաեւ հետայսու:

Պատասխանելով լրագրողների այն հարցին, թե ստեղծված իրավիճակում արդյոք չի՞ նվազում ԵԱՀԿ Մինսկի խմբի դերը, Վահրամ Աթանեսյանն ասաց, որ ինքը կասկածում է, թե ՈՂ եւ ԱՄՆ սառը հարաբերությունների պայմաններում այդ երկրները ներկայացնող համանախագահները կարող են համատեղ աշխատել: Նա ողբերգական չհամարեց այն իրողությունը, որ միջազգային շրջանակներում չի հոլովվում Ղարաբաղի անունը: Ոչ ոք հստակ չի կարող ասել՝ Հարավային Օսիայի, Աբխազիայի եւ Կոսովոյի ճանաչումը վերջնական խաղաղություն կբերի, թե՞ ոչ. այստեղ թեական էր պատգամավորի եզրակացությունը:

Հետաքրքրական էր օտաբախական հանրաքեությունների անկախության ճանաչման գործընթացի առնչությամբ «Հայրենիք» խմբակցության ղեկավարի ձեւակերպումը: Արթուր Թովմասյանի կարծիքով, դա ոչ թե վերջիններիս վառած ճիշտ հաղթականության, այլ Վրաստանի վառած սխալ հաղթականության արդյունքն էր:

ԼՂՀ-ն չի պատրաստվում ճանաչման խնդրանքով դիմել Ռուսաստանի Դաշնությանը, եւ նման հարց «կլոր սեղանի» ժամանակ չի արծարծվել, նշեցին բանախոսները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է հարկ

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հարությունյան 47
Թող՝ 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱՀՈՒ ԱԶԵՏԻՔԵՍՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՀՈՒԲԵՍՆ / հեռ 529221

Հավատարմագիր (գրասենյակ) / հեռ 582960

Լրագրողների սենյակ / հեռ 581841

Գովազդ. ծառայություն / հեռ 582483

Շուտբարեալ լրահոսում ծառայություն
/ հեռ 529353

Գովազդային բաժանմունք
«Ազգ» թերթի
Թերթի նիստերի անջրդողական թե ծանանկի արտատպումները տրագիր մանրի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրավոր համաձայնության խոտի արգելվում են համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նիստերը չեն գրախմսում ու չեն վերադարձնում
Գ տարով յարյանները գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

70 հազար դրամ՝ էլի ինչքա՞ն ուսուցիչների աշխատանք կորցնելու հավին

1-ին էջից

Մի՞թե այսպանը բավական չէր թեկուզ մասամբ անհրաժեշտ օպտիմալացման, հաճախագրի «բեռնաթափման» ձեռ բերված մակարդակով առայժմ բավարարվելու, քանի առած անիվը կանգնեցնելու համար:

Բայց արի ու տես, որ թեեւ այսօր օպտիմալացման խնդիր հատուկ դրված չէ, սակայն հաճախագրի այդ «օպտիմալացումն» այլեւս ինքնակա շարունակական գործընթաց է՝ պայմանավորված ինչպես աշակերտների թվի շարունակվող նվազմամբ (արտագաղթի եւ ծնելիության ցածր մակարդակի պատճառով), այնպես էլ այս պայմաններում դպրոցի նկատմամբ հետեւողականորեն շարունակվող կոշտ հաղթականությամբ: Մինչդեռ աշակերտների թվի նվազումը, արտագաղթի ու ծնելիության խնդիրները պետության լուծելի խնդիրն են: Ինչո՞վ է դրանում մեղավոր իր մասնագիտությամբ աշխատող, իր կյանքի տասնամյակները դպրոցին տված եւ դեռ աշխատելիս տարիի մանկավարժը, որին հավելյալ նոխազ պիտի դարձնեն՝ նրանից խլելով, պետականորեն կոպտորեն ոտնահարելով իր մասնագիտական աշխատանքի իրավունքը, ուզած ժամանակ նրան առանց ձեւականությունների, սառնասրտորեն դպրոցից դուրս շպրտելով: Դպրոցի բարեբարոյականքնե՞ր, որոնք... Կներեք, մարդ օրինակներ շատ մանկավարժներից, դպրոցականներից եմք առիթ ունեցել կարծիք լսելու, որ դպրոցի ուսուցիչները այնքան հաճախ ու այնքան առագ չպիտի լինեն: Եվ երկրորդ՝ ամեն մի բարեբարոյական արդյունքն ու գնահատականը աշակերտների, դպրոցի շրջանավարտների գիտելիքների եւ իմացության մակարդակն է, որի մասին այսօր ավելի լավ է չխոսենք: Ուստի որակ սանում եմ ոչ թե ուսուցչի դպրոցական ժամային ծանրաբեռնվածությունը եւ դասարաններում աշակերտների սահմանային խտությունն ավելացնելու ճանապարհով, այլ ընդհակառակը: Սրանից 4-5 տարի առաջվա մեր «Կրթություն» թերթի տեղեկատվությամբ՝ էստոնիայում, օրինակ, ոչ այլ ոք, քան երկրի խորհրդարանը կրթության մասին օրենքով սահմանել է, որ երկրի հանրակրթական դպրոցներում դասարանների առավելագույն խտությունը չպետք է անցնի 24 աշակերտից: Սա է կրթության որակի հանդեմ իրական մտահոգությունը: Ի դեմ, արդեն տարիներ առաջ այդ նույն էստոնիայում, ըստ նույն տեղեկատվության, ուսուցչի նվազագույն աշխատավարձը համարժեք էր 300 դոլարին:

Որեւէ էլ մեր կառավարական պաշտոնյաները կաբինետյան լինեն Հանրապետական բանկի հանդեմ ինչ-ինչ պատասխանատվություններով, մեր ազգային դպրոցը, մասնավորապես հայոց լեզվի ուսուցման անհրաժեշտ մակարդակի ապահովման պայմանների ստեղծումը ոչ թե բանկի, այլ մեր հանդեմ է: Կարեւոր մտավորական ու ազգասական ներդրումների այս տարվա արդյունքները, այնտեղ մեր շրջանավարտների՝ մայրենի լեզվից սպասած անբավարարների համեմատական վիճակագրությունը եւ կիսակամ, թե ինչ եմք ուզում ասել եւ իրականում որտեղ է խնդիրը: Իսկ հիմա, երբ հասկանալի պատճառներով մանկավարժների մի զգալի մասը 22 ժամ դասավանդով ապահովված չէ, պահանջել, որ ապահովվեն՝ նշանակում է էլի շատերի՝ այսօրվա պայմաններում հանիրավի դուրս մղել դպրոցից: Մի մասի արյուն-արցունքի հավին մյուսների աշխատավարձը բարձրացնել՝ որ ինչ:

Թող էլի լինի դպրոցի հավով 70 հազար, 120 հազար դրամ, որը մանկավարժի աշխատանքի դիմաց շատ չէ: Բայց թող առկա իրավիճակը, հասարակության մի մտավորական մասի եւ հենց կրթության ոլորտի իրական շահերը հավի առնելով նաեւ կանգնեցվի կաղային նոր հնարավոր ջարդը, մարդկանց թույլ տվի պակաս ժամանակով աշխատել: Դարձյալ Շիրակի տվյալներով՝ եթե այստեղ ուսուցչի փաստացի միջին ծանրաբեռնվածությունը սահմանված դպրոցների հավով ներկայումս 0,76 տոկոս է, ապա պարտադրելով լրիվ ծանրաբեռնվածություն՝ կոտիս հավարկով կարող է նշանակել, որ մարզի ուսուցիչների թվի էլի մեկ քառորդ պետք է գործազուրկ դառնա: Կարծում եմք՝ սա ոչ օրինական է, ոչ մարդկային ու ոչ էլ բարոյական: Այսպես սոցիալական խնդիր չեն լուծում: Այսպես սոցիալական նոր խնդիրներ ու նոր լարվածություն են ստեղծում:

ԱՌԱՏԱՐԿ

Սամվել Նիկոյանը դժգոհում է ոստիկանությունից

Մարտի 1-2-ի դեմքերը ինքնաշեջ հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանը երեկ առաջին անգամ կոչացել էր եւ դժգոհություն հայտնեց հանձնաժողովի հետ աշխատող պետական այլանների մեկից՝ ոստիկանությունից, որ հանձնաժողովի հարցադրումներին ըստ էության չի արձագանքել: Որպեսզի հանձնաժողովականներն ու ներկա լրագրողները լավ պատկերացնեն, թե ինչի մասին է խոսքը, նա կարդաց ոստիկանությանն ուղղված հարցադրումները:

Ոստիկաններից հանձնաժողովը հետաքրքրվել է, թե 2008-ի մարտի 1-2-ի առավոտյան իրադարձությունների մասնակից ոստիկաններից ո՞ւմ ի՞նչ զենք կամ հատուկ միջոց է ամրակցվել, խնդրել է տրամադրել անվանական ցուցակն ամբողջությամբ, ամեն տեսակ՝ իր համարանիշով, բացի այդ՝ կիրառված զենքերից յուրաքանչյուրից քանի՞ փամփուշտ է կրակվել: Սրանք այն կարեւոր հարցերն են, որոնք հանձնաժողովին թույլ կտան իրենց առջեւ դրված խնդիրները պարզաբանել: Ոստիկանությունից պատասխանել են, թե տվյալ տեղեկությունները տրամադրվել են հատուկ ինքնաշեջ ծառայությունների եւ հատուկ միջոցների հետ: Հատուկ միջոցների օգտագործման հետ կապված խնդիրներն ուսումնասիրելու նպատակով նախաքննության մարմնի կողմից մասնագետ են ճանաչվել համապատասխան անձինք եւ նշված հարցի սպառիչ պատասխանը կարող եք ստանալ ՀՀ հատուկ ինքնաշեջ ծառայությունից»: Ամբողջական տեսագրություններ ուղարկելու հանձնաժողովի պահանջին ոստիկանությունից պատասխանել են, թե այլ տեսագրություն չունեն (մինչ այդ ուղարկել էին 2 ռոդեանոց խղճուկ տեսանյութ):

Ս. Նիկոյանը նկատեց, որ հանձնաժողովը գործելու երկու ամիս ունի ընդամենը, եւ պետք է այդ ժամանակում ամենակարեւոր հարցերի պատասխանը ստանա, իսկ նման պատասխաններով հանձնաժողովը չի կարող իր առջեւ դրված խնդիրները կատարել. «Առաջին անգամ ես իմ դժգոհությունն եմ հայտնում պետական մարմնի աշխատանքից, սա մեզ չի բավարարում»: Հարցերը հանձնաժողովը վերադարձնելու է ոստիկանությանը: Դատախազություն նամակն ուղարկվել է օգոստոսի 20-ին, դեռ պատասխանը չի ստացվել, մասնավորապես հանձնաժողովին հետաքրքրում է տպանությունների հանգամանքներն ու իրականացնողների անձը, տպանվածների գործողությունները մինչեւ մահանալը, իրավական գնահատականը եւ այլն: Ճշտվե՞լ է արդյոք տպանության գործիքների եւ հատուկ միջոցների պատկանելությունը, ինչ քննչական գործողություններ են իրականացվել, հատուկ միջոցների կիրառման համաչափությունն ու իրավաչափությունը, ինչպիսի՞ բացահայտումներ կան. Դատախազության պատասխանը դեռ չի ստացվել:

ԱռՀեն ժամանակն է, որ հանձնաժողովը ներկայացնի մինչեւ այժմ արված աշխատանքի արդյունքը, սակայն պարզվում է, որ դեռ բազմաթիվ հարցերի պատասխաններ, դեռեւս միայն մարտի 1-ի վաղ առավոտյան «Ազատության» հրապարակում տեղի ունեցածի մասին պետական այլանները չեն օգնում հանձնաժողովին բացահայտել: Ի դեմ՝ հանձնաժողովի աշխատանքին

ռայությանը, ոստիկանության ծառայողական քննության արդյունքները նույնպես այդ ծառայությանն են տրված, նրանցից էլ հանձնաժողովը կարող է սպառիչ պատասխան ստանալ: «Այս պատասխանը համարժեՀ է մեր հարցադրմանը», հարցրեց Ս. Նիկոյանը՝ «Ոչ» պատասխանը ստանալով հանձնաժողովականներից Նահրա Զոհրաբյանից: Իսկ արդյոք ցուցարարների վրա կրակ բացելու հրաման տվե՞լ է, եթե այո՝ ո՞ւմ կողմից, ինչ իրավական հիմքերով, ինչո՞վ է պայմանավորված զենք կիրառելու անխուսափելիությունը: Պատասխանում նշված է, թե ցուցարարների վրա կրակ բացելու հրաման որեւէ մեկը չի տվել: Հատուկ միջոցների ճիշտ կամ սխալ կիրառման մասին հարցը, ինչպես նաեւ «Չերյոմուխա» հատուկ միջոցի կիրառման կարգի եւ տեխնիկական բնութագրի մասին տեղեկատվություն տրամադրելու պահանջի պատասխանը. «Հատուկ միջոցների ճիշտ գործադրման դեպքում մարդկային զոհերի բացառման կամ հնարավորության հարցը քննարկվում է հատուկ քննչական ծառայությունում նախաքննության շրջանակներում, եւ լիարժեք պատասխանը կտացվի նախաքննության ավարտից հետո: Հատուկ միջոցների օգտագործման հետ կապված խնդիրներն ուսումնասիրելու նպատակով նախաքննության մարմնի կողմից մասնագետ են ճանաչվել համապատասխան անձինք եւ նշված հարցի սպառիչ պատասխանը կարող եք ստանալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունից»: Ամբողջական տեսագրություններ ուղարկելու հանձնաժողովի պահանջին ոստիկանությունից պատասխանել են, թե այլ տեսագրություն չունեն (մինչ այդ ուղարկել էին 2 ռոդեանոց խղճուկ տեսանյութ):

Ս. Նիկոյանը նկատեց, որ հանձնաժողովը գործելու երկու ամիս ունի ընդամենը, եւ պետք է այդ ժամանակում ամենակարեւոր հարցերի պատասխանը ստանա, իսկ նման պատասխաններով հանձնաժողովը չի կարող իր առջեւ դրված խնդիրները կատարել. «Առաջին անգամ ես իմ դժգոհությունն եմ հայտնում պետական մարմնի աշխատանքից, սա մեզ չի բավարարում»: Հարցադրումներ հանձնաժողովին ներկայացրեց Ազգ հարցադրումներ հանձնաժողովին հետաքրքրվեցին Ազգ

մասնակցող Առամ Հարությունյանն առաջարկեց այս մասին բարձրաձայնել Աժ առաջին նիստի կառավարության հետ հարց ու պատասխանում, որպեսզի վարչապետը տեղյակ լինի գերատեսչություններից մեկի աշխատանքին:

Երկար ժամանակ ժամանակավոր հանձնաժողովի անդամները բացասաբար էին վերաբերվում եվրոկառույցների եւ մասնավորապես՝ մարդու իրավունքների հանձնակատարի կողմից առաջարկվող անկախ փաստահավաք խումբ ստեղծելու առաջարկին, բայց երեկ Ս. Նիկոյանն առաջարկեց անկախ մասնագիտական խումբ ստեղծել, հավասարակշռված անկախ մասնագետներով, որոնք փաստահավաք գործ կանեն, եւ աշխատանքի արդյունքները կներկայացնեն հանձնաժողովին, որն էլ դրա արդյունքում քաղաքական գնահատական կտա:

Երեկ հանձնաժողով էր հրավիրվել առողջապահության նախարարության փրկարարության գիտագործնական կենտրոնի տնօրեն Հրաչ Վարդանյանը, որը տեղեկություններ տվեց 2008 թվականի մարտի 1-2-ին տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում վնասվածքներ ստացածների եւ զոհվածների մահվան հանգամանքների դատաբժշկական փորձաքննության արդյունքների վերաբերյալ:

Կատարվել են ամբուլատոր եւ ստացիոնար փորձաքննություններ, ամբուլատոր փորձաքննություն են անցել 125, ստացիոնար՝ 140 հոգի: Փորձաքննողների եւ ոստիկանների ներկայացրած թվերի մեջ որոշ տարբերություն կա, ինչը Հ. Վարդանյանը բացատրեց նրանով, որ փորձաքննությունը շարունակվում է ընթանալ: Կատարվել է 10 դիակի փորձաքննություն, որից 8-ը կատարվել է մարտի 1-2-ի օրերին, 2-ը հետագայում՝ 40-45 օր հետո են մահացել:

Ոստիկաններից բուժօգնության դիմել են 111 հոգի, 93-ը՝ բուք առարկայով են վերք ստացել՝ 12-ը նրանցից նվազ ծանր մարմնական վնասվածք, 31-ը՝ թեթեւ քայքայող մարմնական վնասվածք, 50-ը՝ վնասվածքներ: Քաղաքացիներից 1-ը ծանր մարմնական վնասվածք է ստացել բուք գործիքով, 1-ը՝ նվազ ծանր, 5-ը՝ թեթեւ քայքայող, եւ 5-ը՝ թեթեւ:

Ստացիոնար բուժում անցնողներից 87-ն են վնասվածքներով եղել:

Հանձնաժողովական Ա. Շահբազյանը հետաքրքրվեց «Հայկական ժամանակ» թերթում տպագրված զոհված քաղաքացիներից Սամվել Հարությունյանի մահվան հանգամանքների վերաբերյալ, Հ. Վարդանյանը վկայեց միայն գանգուղեղային վնասվածքի մասին, այդ վնասվածքով Ս. Հարությունյանը մարտի 1-ին, ժամը 22.10-ին ընդունվել է «Արմենիա» բժշկական կենտրոն, իսկ «ՀԺ»-ում ասվող կաթոլիկները նրա վրա չեն եղել:

ՄԱՐԻՆԵՍԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վրաց-ռուսական միայն հյուպատոսական հարաբերություններ

1-ին էջից

Ամեն դեպքում, քայլերում ու հայտարարություններում նոր որակներ դրսեւորելու հակված Ֆրանսիան երեկ, Միացյալ Նահանգների հետ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում առաջարկել է Վրաստան, մասնավորապես հարավօսական հակամարտության գոտի ՄԱԿ-ի փաստահավաք առաքելություն ուղարկել՝ պարզելու վերջին իրադարձությունների հանգամանքներն ու փաստերը, մասնավորեցնելով հենց մարդու իրավունքների խախտման հարցերի շրջանակը: Ռուսաստանը այս առաջարկությանն, ի դեմս ՄԱԿ-ում մշտական ներկայացուցիչ Վիտալի Չուրկինի, տեղեկացրել է, որ որեւէ հետաքննության անհրաժեշտություն չի տեսնում, հաստատես, որ, ըստ Չուրկինի, փաստերն ակնհայտ են:

Ամերիկան թեմատիկայի շարունակության կարվածով էլ, յուրօրինակ ու առավելապես իրենց նախընտրական հարգարակի շրջանակներում տարբերություն հայտարարություններով են հանդես գալիս նաեւ Միացյալ Նահանգների նախագահացուները, ընդ որում՝ չմոռանալով փնտրել մուսի ընտրած ռազմավարության հեռանկարայնությունը: Իսկ ԱՄՆ գործող նախագահի գործողությունների ու հայտարարությունների պատասխանը բնավ էլ ոչ խոսքերի մակարդակում է տվել Ռուսաստանը, այլ հավային «Բուշի տոհիկների» ուղղությամբ: Մասնավորապես, «ՌԻԱ Նովոստի» գործակալության փոխանցմամբ, սեպտեմբերի 1-ից մաակարարների ցանկից հանվում են 19 ամերիկյան ընկերություններ, որ Ռուսաստան հավի միս էին ներկում: Այս մասին դեռեւս նախորդ օրը հայտարարել էր ՈՌ վարչապետ Վլադիմիր Պուտինը: Թեեւ այս գործողության հետ մեկտեղ ռուսական կողմը պնդում է, թե հարցը չի առնչվում Վրաստանի խնդրում ԱՄՆ դիրքորոշմանը, դժվար թե հավի մսի մաակարարների հարցը դրվեր հենց այս պահին:

Այս ամենին զուգահեռ Վրաստանի կառավարական պաշտպանությունը մեկնում է Բրյուսել եվրամիության լիդերների հետ հանդիպմանը սեպտեմբերի 1-ին, Թբիլիսի ավելի ուշ՝ սեպտեմբերի 4-ին կիսրընկալի ԱՄՆ փոխնախագահ Դիկ Չեյնիին, հաջորդ շաբաթվա ընթացքում հարավկովկասյան երկրներում, այդ թվում՝ Վրաստանում կլինի նաեւ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ Գորան Լենմարկերը:

Առավել հետաքրքրական են «ռազմական ավարներին» առնչվող քննարկումները: Մասնավորապես, Ռուսաստանի գլխավոր շտաբը հայտարարել է, որ չի պատրաստվում ամերիկյան կողմին վերադարձել վրացական Փոթի քաղաքում օգոստոսի 18-ին վերցված 5 ամերիկյան «Համմերները», որ այդտեղ էին ռազմական նպատակներով: ՈՌ ՀՈՒ գլխավոր շտաբի ղեկավարի տեղակալ Անատոլի Նոգովիցինը, ռուսաստանյան լրատվամիջոցների փոխանցմամբ, հայտարարել է, թե «ռուս զինվորականները «հետաքրքրական շտաբ» են գտել այդ մեքենաների մեջ ու շարունակում են աշխատել այդ ուղղությամբ»:

Ամերիկյան լրատվամիջոցներն էլ տեղեկացնում են, թե ամերիկյան կողմը պատրաստվում է 540 հզ ԱՄՆ դոլար հաշիվ ներկայացնել ռուսներին, եթե ամերիկյան մեքենաները չվերադարձվեն: Ինչպես ասում են, լուսանցքում հուսալ սեփական կառույցներից ավելին չի կարող վերադարձվել:

ԹՈՒՐՔ ՍՍՈՒԼ

Անկարայի անդրկուլիսներում մեծ են համարում նախագահ Գյուլի Երեւան ժամանելու հավանականությունը

Թեեւ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը դեռեւս չի արձագանքել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրավերին, սակայն թուրքական մամուլի հրապարակումներն ու Անկարայի պատասխանությունը մեծացնում են հրավերի ընդունման հավանականությունը: Մամուլի առումով հետաքրքրությունը «Յուրեթի» օգոստոսի 28-ի հրապարակումն է, որտեղ հոդվածագիրը կարծիք է հայտնում, որ երբեմն խաչաձեւվում են սիրտն ու արտաքին հաղորդակցությունը՝ որոնք էլ դրանք տարբեր ոլորտներ լինեն:

Արդա նա ավելացնում է. «Դրա ամենացայտուն օրինակը ինչպես սեղանի թենիսի թիմի երկրորդ հանդիպարտային պատերազմի ավարտին ԱՄՆ կատարած այցելությունն էր, որը հանդուրժելով Վաշինգտոնում Կոմունիստական Չինաստանի ճանաչման ուղղությամբ կատարված «առաջին քայլը», պատմության մեջ հիշատակվում է որպես «սեղանի թենիսի դիվանագիտություն»: Դրա մեկ այլ օրինակին կարող են ականատես լինել խնդրահարույց երկու հարեւանները՝ Թուրքիան եւ Հայաստանը: Ֆուտբոլային հանդիպման համար Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Երեւան հրավիրեց թուրք պատգամավորին: Արդյունքում արդեն նախագահ Գյուլին է ներկայացրել Երեւան գնալու «պլանների եւ մինուսների» վերաբերյալ զեկուցագիրը: Վերջնական որոշման համար սպասում են Գյուլի պատասխանին: Միեւնույն ժամանակ նաեւ պատրաստություն են տեսնում հաստատել անվտանգության վերաբերյալ: Շաբաթվա վերջին ենթադրաբար Երեւան կգործուղի անվտանգության հատուկ ծառայությունների 10-15 հոգանոց պատվիրակությունը: Այդ առումով արդյունավետությունը դիտել է Երեւանի վարչակարգը: Թուրքիան այս փոփոխությունը որպես կանոն իրականացնում է Վրաստանում թուրքական դեսպանատան միջոցով, սակայն «արտակարգ» իրավիճակում դիտում է նաեւ Սեպտեմբերյան տնտեսական համագործակցության կազմակերպության հայաստանյան ներկայացուցչին»:

Նույն օրվա համարում «Յուրեթին» լրացնում է Նյու Յորքի «Turkishny.com» կայքը, նշելով, որ Երեւան գործուղող անվտանգության ծառայությունների պատվիրակությունն իրականում «հակահարձակման թիմն» է, որն այնտեղ հայ գործընկերների հետ կքննարկի անվտանգության միջոցառումների մանրամասնությունները, «Հրազդան» մարզադաշտում նախագահ Գյուլի անվտանգությունը կապահովեն նրա անձնական թիկնապահները ու այս թիմի 15 անդամները, որոնց ընտրում են անվտանգության գլխավոր վարչության հատուկ նշանակության բաժնի 950 աշխատակիցներից, իսկ տեղանքին ու երթուղուն՝ Երեւանի ոստիկանությունը:

Ըստ վերոհիշյալ կայքէջի, թեեւ Գյուլն ասել է, որ գնալ-չգնալու հարցում դեռեւս որոշում չի կայացրել, սակայն Անկարայի անդրկուլիսներում, հիմք ընդունելով այն, որ մինչեւ օրս չի մերժվել Հայաստանի հրավերը, մեծ են համարում Թուրքիայի նախագահի Երեւան գնալու հավանականությունը:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

«Բոլորս միեւնույն հողի զավակներն ենք»

1-ին էջից

- Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ասաց, որ սեպտեմբերի 6-ին Երեւանում Ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումը միասին դիտելը պատեհ առիթ է հարաբերությունների զարգացման համար: Որքանով ընդունելի եք գնալ-չգնալու առնչությամբ:

- Ուշադիր կարդացի հարգարժան Սերժ Սարգսյանի հետ ձեր հարցազրույցը: Համաձայն եմ կարեւոր հարցազրույց: Ես դա ընկալեցի խնդիրների կարգավորման ու թյուրըմբռնումների հաղթահարման նպաստելու օրինակ բոլոր մակարդակներում: Հարգարժան Սարգսյանի հրավերի առնչությամբ կարող եմ ասել, որ ուսումնասիրությունները բազմակողմանիորեն շարունակվում են:

- Դիվանագիտական հարաբերությունների հաստատման եւ սահմանների բացման առնչությամբ Հայաստանում կան պահանջ եւ ակնկալիքներ: Այս հարցում կարելի՞ է զարգացում ակնկալել:

- Անկեղծորեն աջակցում եմ տարածաշրջանի խաղաղության համար վերջին շրջանում ցուցաբերվող ջանքերին: Կարծում եմ, որ կարեւոր է առիթների օգտագործումը: Մեր ցանկությունը հետեւյալն է՝ ուզում ենք մեր խնդիրները լուծել բոլոր հարեւանների հետ: Շատ մեծ նշանակություն ենք տալիս հիմնախնդիրների երկխոսության ճանապարհով կարգավորմանը: Մենք տարածաշրջանում խնդիր լուծող երկիր ենք, իսկ կովկասում խիստ կարեւորում ենք խաղաղությունն ու կայունությունը:

- Այդ դեպքում, ո՞րն է խնդիրների լուծմանը խանգարող հանգամանքը:

- Հավատացած եմ, որ տարեցված հակամարտությունների, առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը երկխոսության միջոցով եւ համաձայնությամբ մեծապես կհանգստացնի եւ բարելեցություն կպարգեւի տարածաշրջանի մարդկանց: Ես այս մասին Ղազախստանում՝ Աստանայի հանդիպմանը ասել էի նաեւ հարգարժան Սարգսյանին: Այս տարածաշրջանը մեր բոլորի տարածաշրջանն է: Բոլորս միեւնույն հողի զավակներն ենք: Պատմության մեջ տարիներ ի վեր թուրքերն ու հայերը միասին գոյակցել են այս հողում: Այն ասիենանի, որ օսմանցիները «հավատարիմ ազգ» հորջորջեցին հայերին, պետական կարեւոր պատասխանատվություններ նշանակեցին նրանց: Ունեցել ենք դառը եւ խաղաղ բազմաթիվ հուշեր: Ինչպես վերջին անգամ արտահայտվել էի Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծին նվիրված արարողությանը, մեր արտուն անցնում է օրերից մի օր տարածաշրջանի բոլոր երկրների մասնակցությունն այս նախագծերին: Հավատում եմ, որ մշակույթով եւ ավանդույթներով միմյանց շատ մոտ կանգնած տարածաշրջանի մարդիկ, որոնք էլ էթնիկապես եւ կոնոով տարբերվեն, անվտանգ միջավայրի ստեղծման դեպքում հասնելու են ենթադրությունները գերազանցող կայունության եւ բարելեցության մակարդակի: Ինչպես ասացի, ուշադիր հետեւում ենք զարգացումներին:

Հ. Ղ.

Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքը մեզ դիմավորում է սառնահամբույր զեփյուռով, որ առարկայացրեց մեր սպասելիքները զովության եւ լույսի հաղաքաղաքը դեռ չմեռած: Փոքրիկ լճակը, որ ինչպես կարուսելն, այնպես էլ սառն է, կողքին մի փոքրիկ մասուռ ապահովության զգացողություն են տրամադրում: «Բարի ելք», ժողովրդական կարուսելյան:

Լուսանկարը Ա. Վարդանյանի

Ջերմուկում վեց կամ ավելի առողջարան կա, որոնք հայտնի են դառնում ախարհին ինտերնետային www.jermukcity.am կայքէջից: Այստեղ քաղաքաբնակները ներկայացնում է առողջարանների եւ հյուրանոցների հասցեներն ու հեռախոսահամարները, որոնք լավ հնարավորություն են հասկանալու՝ առողջարանային հանգիստ թե նախընտրելու, թե՝ ծանոթների միջոցով սեփական տուն կամ բնակարան թե վարձելու, որն անհամեմատ ավելի է ձեր նախընտրությունը: Նշենք միայն, որ եթե առողջարանային գներն սկսվում են օրական մոտ 11 000 դրամից մեկ մարդու համար, ապա առանձին բնակարան վարձակալելը կամ հյուրանոցային փոքրիկ, բայց հարմարավետ պայմաններում տեղավորվելը կարող է խլել դրանից էլ ավելի գումար չորս-հինգ հոգանոց ընտանիք տեղավորելու համար: Ինչ խոսք, սարսափելի չէ, մանավանդ որ հանդիպեցինք նույնիսկ ավտոտնակների, որոնք տերերի հնարամտությամբ՝ եւ հուշեկների բազմաթանկության պատճառով վերածվել էին հանգստյան տների: Մեր իսկ համեստ հաշվարկներով՝ Ջերմուկի կենտրոնում գտնվող յուրաքանչյուր բնակարան կարող է օրավարձով տվյալ դեպքում տանտիրոջ համար ապահովել ամսական միջինը 300 000 դրամ չհարկվող եկամուտ: Իսկ խանութներն էլ նախանձելի հաճախորդների հանակ ունեն, առնվազն ողջ ամառային սեզոնին:

***

Ջերմուկը երկփեղկված է գետով, որի աջ եւ ձախ ափերը տարբեր հարմարներ, անգամ տարբեր կլիմայական տարածքներ են հիշեցնում՝ տարբեր մարդկանցով եւ հակադիր տրամադրություններով: Ձախ ափ թաղամասում տվյալ հանգիստ կարծես մշտական բնակիչ է, որի հանգությունը, սակայն, գորշ եւ անհարարյալ շեմերը չի շարժել տեղից, չնայած միջանցիկ հանուց փոշվող ապակիների տակ կարող ես հայտնվել ամեն վայրկյան: Ձախ ափում ապրում է ջերմուկցիների լրջանասուն տոկոսը: Այս թաղամասի բնակչությունն աճեցնում է Աջ ափի առողջարաններում, առեւտրի սպասարկման եւ ծառայությունների մատուցման ոլորտում: Աշխատանքի են գնում եւ վերադառնում երթուղայիններով: Աշխատավայրում պատահաբար երեւացող տեսարաններն էլ են ուրիշ, երանակն էլ ավելի բարեհաճ ու առանց հոդմահար հանու: Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանը պատմում է, որ Ձախ ափում մի մարգարտյոց է կառուցվելու, որ առանձին տիպային շեմ է լինելու՝ լողավազաններով եւ տեխնիկական զինվածությամբ աննախադեպ է լինելու: Այնուամենայնիվ ջերմուկցին ապրելու է առողջարանների, հանգստյան տների տուրիստների, ընդհանրապես՝ հյուրերի հանդեպ ունեցած հանդուրժողականությամբ: Ինչը՝ քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանը պատմում է, որ Ձախ ափում մի մարգարտյոց է կառուցվելու, որ առանձին տիպային շեմ է լինելու՝ լողավազաններով եւ տեխնիկական զինվածությամբ աննախադեպ է լինելու: Այնուամենայնիվ ջերմուկցին ապրելու է առողջարանների, հանգստյան տների տուրիստների, ինչպես նաեւ հայտնի ապրանքանիշի գործարանի տված աշխատավարձի հաշվին: Իսկ Ձախ ափի բնակիչներն առայժմ կարող են հարստանալ, որ քաղաքի միակ նորակառույց Ս. Գայանե եկեղեցին՝ խաղաղ օրհնությամբ եւ վեհությամբ իրենց թաղամասն է զարդարում:

Քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանը քաղաքի անհամաչափ զարգացման մասին մեր տպավորությունը մեղմելու համար թվում է կատարած եւ կատարելիք աշխատանքները: Ինքը՝ քաղաքապետը բնակվում է ձախափնյա թաղամասում եւ ասում է, որ տրամադրություն չունի տեղափոխվելու Աջ ափ: «Կեչուտում, որ առաջ գյուղ էր, հիմա՝ քաղաքի երեք թաղամասերից մեկը, մանկապարտեզ են հիմնանորոգում, որի համար 100 միլիոն դրամ է հատկացված: Ավելի կարճ ճանապարհ են ասֆալտապատում, որ Կեչուտը կմիացնի Աջ ափին»:

Քաղաքապետը պատմում է նաեւ, որ հայտնի հանքային ջրերի ընդհանրապես հիմնովին մարվում են, բազալտապատվում, որտեղ լցվելու են Ջերմուկի խմելու մաքուր ջրերը եւ փայլելու են իրենց մաքրության գոհարափայլով:

«Ազգային պատկերասրահը ջերուցման դեռեւս առկախ խնդիր ունի, որով եւ վանգված է ցուցանուշների անվանգությունը ճնշան ամիսներին: Դրա համար պայմանավորվածություններ պետք է ձեռք բերվեն մշակույթի նախարարի հետ, քաղաքի խնդիրներն է մանրամասնում Վ. Հովհաննիսյանը: Պարարվեստի եւ երաժշտական լավ դպրոցներ ունենք, ինչպես նաեւ արվեստի տարբեր ճյուղերի ուսուցիչների վերապատրաստման կենտրոն: Ուզում ենք ճարտարագիտական համալսարանի մասնաճյուղ բացել էստեղ, որի համար պայմանավորվածություն ունենք ճանաչված Լեւոն Թորոսյանի հետ: Բոլորին ենք տամադրելու նախկին հիվանդանոցի շենքը: Կեչուտ գյուղում դպրոց ենք հիմնանորոգում, Ձախ ափում գտնվող թիվ 2-ը հիմնանորոգված է, իսկ թիվ 1 դպրոցում որոշ աշխատանքներ դեռ պետք է կատարվեն», ասում է քաղաքապետը: Նա ցանկանում է «Ազգի» միջոցով բոլոր հայերին ասել հետեւյալը. «Վերջապես Ջերմուկը ճիշտ ընկալվեց: Հիմա էլ շատ մեծ փոքր չեն դրվել այստեղ, պարզապես ՀՀ նախագահը շատ մեծ ուշադրություն է դարձնում, որը շոյում ու ոգեւորում է մարդկանց, նրանք էլ աշխատում են: Ես ուզում եմ, բոլորը հիշեն, որ Ջերմուկը բոլորինն է: Նրա առողջարարությունն ու գեղեցկությունը ջերմուկցիներն այնքան չեն կարողանում վայելել եւ նրա բնական հմայքն ու գեղեցկությունը այնպես գնահատել, որքան հյուրերը: Լավ կլինի, որ մեր հայրենակիցները մոռանան օտար ու ամայի ծովափերը իրենց բարամներով, որ հաճախ են կիսանկուղային հարկերում, առանց տարրական հիգիենիկ պայմանների անգամ ապրել, քան վճարել ոչ շատ թանկ եւ ավելի հարմարավետ պայմաններում եւ հայրենիքում՝ անվտանգության մեջ հանգստանալ ու բուժվել: Համեցեք Ջերմուկը վայելելու»:

***

Ջերմուկի տեսարժան վայրերից ջրվեժը առաջին հայացքից հիացում, ապա եւ հարստություն է պարգեւում՝ մերն է գեղեցկուհի ջրվեժը, անընդհատ վարսերով կախարդում, հմայում է...

Հաջորդ սուր եւ հաճելի զգացողությունը պատճառում է նորակառույց ճոպանուղին: Մոտ 400 մետր է բաժանում ճոպանուղու ներքեւի հատվածը Շիշ սարի գագաթին տեղադրված կայանատեղից, որտեղ ամառվա խեղդող շոգին անգամ ցուրտ է, իսկ մեր գնալու պահին սառը քամի: Այս գեղատեսիլ վայրը ծովի մակարդակից բարձր է 2450 մետր, այլ կերպ ասած, սարն ավելի ամպերին է մոտ, քան հեռվում կարոտս երազի պես ծավալվող լճակին: Ճոպանուղու անվտանգության երիտասարդ աշխատակիցներից Տիգրանը սիրով պատասխանում է մեր հարցերին եւ գովում իրենց գեղեցկուհի քաղաքը: Նա եւ իր ընկերը հյուրասանում են իրենց Դարա Յուրդով, որ բնական ջակուզի կա՝ հանքային ջրով: Միայն թե այնտեղ հասնելու համար «Նիվա» ավտոմեքենա է պետք՝ տեղանքին ծանոթ վարորդով, որ տեղափոխության համար 13 000-15 000 դրամ կպահանջի: Տղաները վստահորեն ասում են, որ Ջերմուկից լավ տեղ չկա: «Փորձեք երեւանում մեկից մի բաժակ ջուր ուզել, անպայման փող կուզի: Իսկ այստեղ գինի՝ կիսուրախորեն, ասում են նրանք: Բարի սիրտ են, դրա համար միլիոնատեր չեն», իրենց նիստուկացի զուսպ համեստությունը պատճառաբանում են երիտասարդ ջերմուկցիները:

Լուսանկարը՝ Վ. Մելիքսեթյանի

Որ քաղաքը մշակութային օջախներ գրեթե չունի, ջերմուկցի երիտասարդներին հուսախաբ չի անում: Նրանք ժամանցի կամ աղջկա հետ ծանոթանալու համար պատահաբար չեն համարում համերգը, կինոն կամ թատրոնը, կարող են բավարարվել եւ հանքային ջրերի ընդհանրապես՝ հանրահռչակ «գալերեայով» կամ դրանից այն կողմ տարածվող ֆիդայիների ճեմուղով, որը տարածվում է անտառի բարձր ու վեհ ծառերի միջով: Այնտեղ քանդակագործ Հովհաննես (Օնիկ) Մուրադյանն անմահացրել է հայ ֆիդայական շարժման նշանավորներին: Մոտենում ես աղջկան, հարցնում՝ ճանաչո՞ւմ է քանդակի հերոսին ու... ծանոթությունը զրույցի տեսքով՝ պատրաստ է:

***

Փիլիպոսում մի խումբ երեխաներ մոմ են վաճառում: Առնում են հինգ դրամով, վաճառում՝ հիսունով: Աշխույժ ու չարաճճի տղաներ են, խելացի աչքերով, ավելի շարժուն ու ճարպիկ, քան ժողովրդական սրբավայրի քարերի մեջ սուտացող մողեսները: Հյուր դիմավորելու եւ պատմելու իրենց արվեստով նրանք կարող են մրցել յուրաքանչյուր ուղեկցողի հետ: Պատմում են Փիլիպոսի մասին իրենց լսած լեգենդները: «Քրիստոս անունով մի մարդ ծիով ընկել է անդունդից: Ձիու եւ իր ոտքը ջարդվել է: Այստեղի սուրբ ջրից խմել է ու լավացել: Իսկ քանի որ ընկնելիս գոչել է՝ փրկության հասեք Քրիստոս, եւ հետո էլ մարդիկ իրար պատմել են, թե՝ փրկվեց Քրիստոսը, տեղի սրբավայրի անունը մնացել է Փիլիպոս», պատմում է 12-ամյա Շահնազարյան Հովհաննեսը: Նա խորհուրդ է տալիս խմել սուրբ ջրից եւ այն խելի մարմնի ցավոտ մասերին, ապա երազանք պահել եւ մի քար գցել թիկունքի կողմը: Երազանքն անպայման կկատարվի: Տղաները հպարտանում են իրենց սրբավայրով, Հովհաննեսը խոստանում է սրբավայրը մաքրել մոմերի մնացորդներից եւ տարատեսակ լուսանկարներից, եւ միայն իր նկարած նկարները կախել սրբավայրում: Գարիկն էլ մեկ այլ պատմություն է պատմում: «Այս քառանձավում թուրք ընտանիք է ապրել, որ պատերազմի ժամանակ փախել է, երեխային այստեղ մոռանալով: Հետո հայրը հետ է եկել եւ Աստծու զորությամբ ձիով իջել է քառանձավի մեջ, տեսել, դեռ ձիու պայտի տեղերը թեք ժայռի վրա մնացել են, վերցրել է երեխային ու հեռացել: Մի ուրիշ պատմություն էլ կա, թե ինչպես մի հարս երկրաշարժի ժամանակ փրկվել է, այս քառանձավում թաքնվելով: Այստեղի անունն էլ մնացել է՝ փրկվեց հարսը, կրճատ՝ Փիլիպոս»:

***

Աղանդավոր ու խելագարված մի կին նեղացրել էր քաղաքի զբոսայգում աշխատող հանդակագործին, ու նա մտահոգությունը հայտնում կենսաբանորեն, վիրավորանքից ասածները սեղմած՝ իր ժողովրդի «Վերածնունդն» էր հանդակում տեղական բազալտի վրա: Լեւոն Առաքելյանն է: Ազգս աշխատանք է նրա այս ստեղծագործությունը, առանց էսթիզի է աշխատում եւ պատճառաբանում. «Եթե քարի ձեւերը չօգտագործեմ, հանդակը լավ դուրս չի գա: Քարն է թելադրում հանդակի ձեւը: Նրա վրայով ջուր է թափվելու: Քարը ընտելու է, երբ ավարտեմ աշխատանքս», հավաստացնում է ստեղծագործողը: Իսկ Ջերմուկի կարիքների մասին մեր հարցին ի պատասխան ասում է. «Ես քաղաքին մարդկանց սերն է պակասում, չնայած ես երկու տարին վիճակը մի քիչ փոխվել է»: Նա ճիշտ է, քանի որ Ջերմուկն օրինակելի քաղաք կարող է համարվել մարդության տեսակետից: Իսկ հարգի նմանվող գեղեցկությունն էլ դարերի ժառանգությունն է եւ Աստծո նվերը...

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Լուսանկարը՝ Ս. Մարգարյանի

30 ՕԳՈՍՏՈՍ 2008 ԷՋ Ա

ՀԱՅԵԼԱՅԱՑ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պարբերականությունը՝ երկաբաթյա

Թիվ 16(59)

Արմաս եւ Շիկեր

Ամեն ինչ այնտեղից է սկսել. Բիթլիսից, թեեւ Վիլյամը՝ Առմենակ եւ Թագուհի Սարոյանների չորրորդ զավակը այնտեղ չէր ծնվել, այլ Ֆրեզնոյում, սակայն Բիթլիսը խուժում է նրա միտքն ու երակները՝ իրենից ավագ կոզեռ ու Ռաբել ոդերի, Հենրի եղբոր հուշերկներով, հեռիներ, հորեղբայրների, զարմիկների ասուխոսից: Հորը կորցրել է, երբ չորս տարեկան է, բայց հետո, տարիների հետ զորանում է մատող կարոտը հոր հանդեպ, եւ նա երկար հարցափորձում է Աբեակ հորեղբորը, թե՝ ինչպե՞ս է նա քայլում, խոսում, ժպտում... Ավելի ուշ կարդալով հոր ձեռագրերը, նա հորը կկոչի «քարոզիչ՝ առանց ամբիոնի, բանաստեղծ՝ առանց ընթերցողի...»: Ու մի օր, երբ լրագրավաճառի պայուսակն ուսած վազվզում է փողոցում, նրան կանգնեցրեց Ֆրեզնոյի 20-40-ականների պարծանքը՝ պարտություն չունեցած ըմբիշ Արամ Ժոզեֆը (Հովսեփյան)՝ ճերմակամորթ, կարտաչ, գեղեցիկ դլուցազունը եւ ասաց, որ նրա հոր աբակերտն է եղել. «Պարոն Առմենակն իմ ամենասիրելի ուսուցիչն էր»: Ամեն անգամ հիշելիս Վիլյամի սիրտն ուտչում էր բերկրանքից: Պատահական զուգադիպությամբ հորական (Մինաս) եւ մորական (Պետրոս) պապերն էլ Սարոյաններն էին, թեեւ հորական գերդաստանը նաեւ Կարաօղլյաններ էր: Պատերազմի պատճառով էր դեռատի Վիլյամն աբխատում: Պատերազմը տարել էր Էսթեր մորաքրոջ Վահան որդուն, ով ծնվել էր երգի ու գեղեցկի համար... Մայրը Ֆրեզնոյի փողոցներում ամենուր նրան էր փնտրում, փղձկում ու լալիս: Իրենք էլ էին լալիս, երբ հրոջ նվագակցությամբ Վահանի երգերն էին երգում, իսկ մայրը մտնում, հանգստացնում էր ու հեռանում ննջարան: Մի անգամ Վիլյամը դռան ճեղքից նայեց ու տեսավ, որ մայրը, սեղանին դրած Վահանի նկարի առաջ, լալիս էր ու «գլուխն օրորում, ինչպես հին երգի մարդիկ»: Տարիներ հետո նա կգրի. «Գերդաստանի բոլոր ճյուղերն ապրում էին համաբարաձ աղքատության մեջ, բայց խենթություններով, որ հոյա՛rs են ու ազնի՛վ» Գերդաստանից կիսիի մի հեռի խոտրով, որ ցնորվում էր երգի կարոտից, երբեմն մոնչում ու իր բաժք ձայնով խլացնում էր շուրջը, իսկ հուզված մերձավորներին հորդորում էր. «Կարեւորություն մի տվեք»: Կիսիի մի հեռի Մելիմ, որ արեւելյան իմաստասերներով էր տարված ու երազում էր նոնենիների այգի գցել. ունեցած-չունեցածը մսխեց, ունեցավ, բայց ոչ մի օրեա չունեցավ. դաղը-դաբարկ նստեց: Նա բոլոր հեռիների ու զարմիկների ցուլը կտեսնեմ Սարոյանի մեծուպիտ պատումներում: «Բա ընտանիքի ամենամեծ խելառը՝ հեռի Ջոնդին», որ գիշերուզոր կիքաո էր նվագում ու երգում, Առամի ուղեկցությամբ գնաց մի անգամ ծծերուկի բերահավաքի, որ ընտանիքին մի հիչ փող բերի, բաս ուրախացավ, որ իրենից առաջ բերը հավաքել են... «Սպարեզ» թերթը մայրը երեխաների համար բարձրաձայն կարդում էր, ու նրանք իմանում էին հին երգի կոլաստների ու թվաբանության մասին... Իսկ իրենց մոտ հաճախ էին երեւում հայրենակիցներ, որոնք եկել էին բախտ գտնելու, իրենց սիրտը հարազատ լեռներում թողած: Լուսի տատի, Թագուհի մոր ազգային ճաբերը, սովորույթները առաջացել էին Վիլյամի մեջ ու չնայած չնվազող կարիքին՝ դարձել ընտանեկան հաղորդություն, որը հետո ողջ կյանքում փնտրեց ու չգտավ... «Ուր կուզես գնա, տնից լավ չկա». սա ասում էր ինչ-որ չափով աբխարհաղաղացի Վիլյամ Սարոյանը, որ ապրում էր մեծ հաղարներում եւ վայելում կյանքը լիուլի: Առաջին մեծ հոնորարով 1935-ին եկավ Մոսկվա, որ այնտեղից գա Հայաստան: Մի կոմսոմոլիսորի տանը լսեց նրա մշակած հայկական մեղեդին, այնքան հափշտակվեց, որ խնդրեց կրկնել... Հետո, գիշերվա ժամը 2-ն անց կեսին հյուրանոց գնալիս, կտրեց Կարմիր հրապարակը. Կուսաֆեի կամրջով անցնելիս, ներսում հնչող մեղեդուց ընչահեղձվում էր... Կանգ առավ եւ, մեն-մենակ զգալով, սկսեց հոնգուր-հոնգուր լալ... Երգի պատկերը, կարոտն ու թվաբանությունը ծակում-մտնում էին նրա մաշկի տակ, ցավ դառնում հոգում ու մտնում յուրօրինակ մի «Նեստոի պատմուճան», որից նա պրծում չունե՛ր: Հետո այդ ամենը ցոլանալու էր նրա մեծուպիտ պատումների էջերից, իսկ ամենից տաք՝ Մաքոլի ընտանիքի նրբին զգայումների ու անտես սարսուռների միջից («Մարդկային կատակերգություն»), Վեսլի Ջեկսոնի ընտանիքի խաղաղում տեսլականից, դառնալով ընտանեկան մի հաղորդություն, որ անհաս մնաց նրան: Օտար կնոջ հետ չգտավ իր կյանքի օազիսը, մի հիչ էլ խորթացավ զավակներից եւ օր ծերության խաչվեց իր սիրելի օրորը՝ Ֆրեզնո, տուներ դրեց, լավ այգի գցեց, որի բերը բաժանում էր հարեւաններին, սակայն միայնակության զգացողությունը չփարատեցին ո՛չ այցելուները, ո՛չ մեծարժ-բարեկամները: Կյանքի վերջին տարիների օրագրային նշումներն անձկության եւ հիվանդության դեմ մաքառումի տարիներ էին: Կյանքի վերջում նա կասի. «Կարծեմ աբխարհը ոչիչ փոխեմ, որ քաոս մրն է»: Միայն մի բան էր սփոփում, որ նա մեծացավ, զորացավ, ճանաչ դարձավ ու իր ազգը ճանաչ դարձրեց, հասցրեց ցույց տալ իր ժողովրդի հոգեւոր բարձր արժանիքները, ազնվական ու իմաստուն վարուքարքը, բարությունը, արժանապատվությունը եւ իր կիզող սերը՝ ակունքների, ամենայն ազգայինի հանդեպ... Եվ հենց դրանով նա զանազանվեց բոլոր գրողներից, իսկ օտարագիր հայ գրողների մեջ ոչ ոք այնքան հայ չեղավ, որքան՝ մեր «բարի հսկան», ազատարի ու մարդկության բարության եղջերափողը՝ ՄԵԾՆ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ:

Սարոյանը հայ թատրոնում

ՎԱՐՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2 տարուգիտեր գրադարաններում էինք. Միլտոն ու Թեքերեյ, Լեսինգ ու Դիդրո էինք կարդում, բայց Սարոյանին, որ աբխարհը գիտեր ու համարում էր դարի առաջատարների՝ Շ. Անդերսոնի եւ Ջ. Լոնդոնի շարունակողը, մենք չգիտեինք: Նույնիսկ առաջին այցից (1935 թ.) հետո էլ չիմացանք. ոչ մի տող մամուլում, լոկ հանդիպումներ՝ Ցարենցի, Սահարու, Թոթովենցի հետ, որ շաս ուշ էինք իմանալու...

... Լինելով բարձրահասակ, բարեսեր ու առինքնող երիտասարդ՝ Սարոյանը վաղ արժանացավ թատրոնի ու կինոյի գործիչների ուշադրությանը, նկարահանվեց պատասխանի, իսկ առաջին տիեսները՝ «Իմ սիրտը լեռներում է» եւ «Քո կյանքի ժամանակը» (1939 թ.) անմիջապես դարձան Հոլիվուդյան թատրոնների ընդունված խաղերը: Հայ բեմում Սարոյանը հայտնվեց 1961-ին՝ Ամեմյանի տեսլականով, ով նույնպես այրվում էր հին երգի կարոտով... Փորձեմ կարդալ «Իմ սիրտը լեռներում է» ու չհամակվել նրա գեղով մեղեդայնությամբ, ներքին հուզական ազդակներով: Այնքան ոչ թատերական, որքան պոետիկ ու մեղեդային: Եվ խաչվեցին ու բռնկվեցին՝ գրչի ու բեմի հանճարները եւ այնպես լուցերին միմյանց, որ դժվար էր զատել:

... Աղխաիկ բակ, մի թախտ եւ Ջոնին. համակ շարժում ու մեղեդի մանչուկ, որ ուսում է՝ գլուխկոնների տալու անհաջող, ի վերջո հաջող փորձեր անում... Սոպ՝ զառամ Մեմ Գրեգորն ու նրա «մեղեդին», որ սկսում է մի բաժակ ջրով:

- Երիտասարդ, կարո՞ղ ես մի բաժակ ջուր բերել մի ծերուկի, որի սիրտն այստեղ չէ, այլ լեռներում: «Մեղեդին» շարունակվում է հեսարերասեր մանչուկի անհամար հարցերով եւ հանց լեյտմոտիվ՝ ծերուկի ջրի խնդրանքով... Միջամտում է Բեն Ալեխանդրը, ու հետո «մեղեդին» շարունակում են հայր, Մարեն, փոսասար Հենրին, որն ուզում է Ջոնիին սուլել սովորեցնել... Հետո կխուժեն ավելի կոշտ ձայներ՝ պատերազմի, խեղված աբխարհի ձայները, եւ կհետեւեն հեգ Բեն Ալեխանդրի ընդվզումները... Իսկ մաղապուծ մի Մարե շարունակ ավելը ձեռին, իր դուտնոտությունը կիսակի, երբեմն «Կանչե կոսկե» կմոմա, երբեմն թոռան վրա կհերսոի. «Հորի՞ կրմոնաս քու անուշ բարբառ»... (Խաչիկ Դաշտենցի հրաշալի թարգմանությամբ): Այսպես շարունակ ապրեցնողն ու չապրեցնողը կթափվեն մեր հերոսների գլխին, եւ նրանց կոիվը կգնա, կիրուավի կյանքի հավերժական հանգույցներին... Բայց սարոյանական պատումը չի՞ կարող անհույս մոայլով պատել մեզ: Կան մարդիկ, որոնք իրենց պատառը սիրով կկիսեն չունեցողների հետ ու թեեւ Ջոնիի ընտանիքը, կորցրած իր աղասանը, մաղախն ուսած, կգնա ուրիշ հանգրվան գտնելու, բայց մանչուկը կտեսնի ու կիմանա, որ «աբխարհում ինչ-որ բան սխալ է»:

Ասենք, որ «Իմ սիրտը լեռներում է»-ն իբրեւ բեմական հանճարի շարադանում, մի տեսակ «ջրբաժան» եղավ թատրոնի՝ մինչ այդ եւ հետո եղած պատմության համար: Դա մի այնպիսի սրբազան ծես էր ու արարում, որ թատերախոսները կարկամեցին... Միայն պոեզիայի ու մտի հանճարը՝ Պարույր Սեւակը պոռթկաց ու մի այնպիսի երկար էսսե ոգեց, որ ավելի շուտ, թատրոնի բեմադրվ հրավառություն էր, որով «հանդակեց ու նկարեց» դերակատարներին, որոնք մեր թատրոնի իրերն էին... Ցասքնք, որ Մեմ Գրեգոր-Հայյա Ներսիսյանը, արդեն վաստակոր, ախտահարված թոքերի վերջին շունչն էր փչում՝ կերպարին... Արուա Սարյանն իր Մարեով համարյա անխոս դերից գլուխգործոց ստեղծեց՝ հայոց վշտի հետ նաեւ սուրբ ավանդապահության եւ կենսունակության պատգամներ թողնելով հետնորդներին: Բեն Ալեխանդր-Բաբկեն Ներսիսյանն էլ մի բանաստեղծ էր, որ ինչպես Սարոյանն է գրել՝ ընթերցող չուներ..., ճանզի չար ժամանակում էր աբխարհ եկել: Եվ, այնուամենայնիվ, Սեւակի մեծագույն ներշնչանքը Վարդերեսյան-Ջոնին էր, որի յուրահանչյուր բառն ու շարժումը, ինչերանգն ու կեցվածքը պոետը դրվագել էր իր խոսքում:

«Մի առանձին հիացմունքով պիտի նշել Վ. Վարդերեսյանի, հիրավի, մեծ հաջողությունը: Նրա Ջոնին համակ լույս է, մի պայծառություն, որ անդրադառնում է հանդիսատեսի հոգում: Ոչ մի ավելորդ դիմախաղ, ոչ մի անհարկի շարժում, ոչ մի անտեղի ելեւէջ: Վարդերեսյանն այնպես է վերամարմնավորվել Ջոնիի մեջ, որ երկար ժամանակ հետ չէ երեւակայել մեկ ուրիշ Ջոնի, մինչեւիսկ մեկ այլ ձայնով ու շարժուձեւով»: Ավելին՝ Սեւակն առաջարկում է ամբողջ բեմադրությունը եւ որոշ կերպարներ «արբագրել Ջոնիով»: Եվ սեւակյան պահանջից զերծ չեն մնում ոչ Բաբկեն Ներսիսյանը, ոչ նույնիսկ Հայյա Ներսիսյանը: Կարիք կա՞ ասելու, որ ամեմյանական արարումի բարձր մակարդակն էր Սեւակին լիցավորել ու նետել բարձունքներ, որտեղից էլ թելադրված էին պահանջները: Այս առիթով ես անհրաժեշտ եմ համարում ինչ-որ բաներ հանգամանել, որոնցզի չմոռացվեն, չկորչեն:

1961-ին Հայյա Ներսիսյանը հեռացավ, եւ Մեմ Գրեգոր շարունակում էր խաղալ Վահրամ Փափազյանը: Խաղում էր ինչ-որ անիմանալի ներշնչանքով, հմմամոռաց: Նրա առողջական վիճակն էլ գնալով վատանում էր, եւ բժիշկներն արգելում էին խաղալ: Բեմական գլուխգործոցի կյանքը երկարաձգելու նպատակով պատրաստվեց նոր Մեմ Գրեգոր՝ Հովհաննես Ավագյանը, բայց Փափազյանը ոչ մի ներկայացում բաց չէր թողնում: Ինքն էլ գիտեր, մարդիկ էլ գիտեին, որ նման սրտով ամեն պահ կարող էր վրա հասնել անխուսափելին... Նա միտումնավոր էր թատրոն գնում, որ մարեր բեմում՝ վերջին սիրած դերով, տեխնիկական խոսքը շտրթերին... Ամբողջ երեսանը գիտեր եւ տագնապով լցվում էր դահլիճ՝ պատելի արտիստի վերջին բոցկլտումը վայելելու: Եվ ներկայացումը դառնում էր տագնապով ու սարսռալով լեցուն յուրօրինակ ծես: Պատկերացնում եմ, թե Փափազյանի խաղընկերներն ինչ էին զգում... Վերջին անգամ սուր նոպայից հետո Փափազյանը իրեն հատուկ վարպետությամբ արտաբանին միամտացրեց, տուն ուղարկեց եւ անմիջապես սլացավ թատրոն: Դա 1967 թ. դեկտեմբերի 14-ն էր: Բեմ մտավ, խաղաց, ընչահեղձվեց, թարտաց ու հանգավ... անշարժացավ՝ սովորականից ավելի երկար... Բեմում ու դահլիճում մարդիկ ընչահեղձ էին լինում... Բայց նա «բախտը չբերեց», ինչպես ինքն էր ասում՝ տերը նրան ավելի երկար կյանք էր պարգեւել... Իսկ երբ ուշի եկավ... ծափերից ու «բռավոներից» թվում էր՝ թատրոնի տանիքը կթռչի... Այսպիսին էր այն փթնոլորտը, երբ մեր բեմի մեծերը Սարոյանի «Իմ սիրտն» էին խաղում:

Սարոյան-Ամեմյան հարեւ՝ ձեւի ու բովանդակության առումով նոր ու թարմ արտահայտչամիջոցներ բերեց թատրոն: Առաջին ներկայացումն էր, որ սկսում եւ ավարտվում էր մի ընչով, առանց ընդմիջումի: Մարդիկ մի ընչով էլ արդում, հուզվում ու հրաժեշտ էին տալիս իրենց սիրելի դարձած հերոսներին: Հարյա մարդկային փոխհարաբերությունների նախաձին բնականությունը, որ նույնպիսի ոճաբանություն պարտադրելով, կամա-ակամա առաջավորում էր սարոյանական թատրոնի նորաբուխ հասատումները: Ցոր չէր, որ Սեւակը մի խիստ էական դիտողություն էր արել Բեն Ալեխանդր-Բ. Ներսիսյանին՝ խաղալ ոչ թե արտաբնորեն, այլ օժտված բանաստեղծի: Սա շաս կարեւոր էր՝ երկի գաղափարական ու մարդկային տեսակետից: Նկատենք նաեւ, որ այս ներկայացման մնարական ու դերասանական խաղի ոճաբանությունը հետո վճռորոշ դեր էր խաղալու նորաբուխ հեռուսաթատրոնի գեղագիտական սզբունքների մշակման տեսակետից եւ զուր չէր, որ հենց նրա առաջատար դերակատարներն էին (Վ. Վարդերեսյան, Բ. Ներսիսյան) դառնալու էկրանի թատրոնի առաջին արտիստները:

1978-ին իմացանք, որ Սարոյանը ծանր հիվանդ է: Հիշում եմ՝ ինչպիսի երանությամբ սկսեց թատրոնն աբխատել «խաղողի այգին» պիեսի վրա: Ամեմյանը հրավիրել էր Սարոյանի պոետիկային հարազատ ոեժիսորի՝ Հերիկ Մալյանին, իսկ ձեւավորումն ինքն էր անում: Ու մինչ բեմադրությունը կավարտվեր, լսեցինք Սարոյանի մահվան բոթը եւ կտակը՝ ամյունի մի մասը Հայաստանում ամփոփելու մասին: Այնպես որ, 1981-ին բեմադրությունը դարձավ մեր մեծ հայրենակցի հրաժեշտի արարողություն: Իհարկե, բեմադրությունն այն չէր եւ մինչեւ օրս ասողնված մնաց, թե ինչպե՞ս կարող էր գեղագանց ոեժիսորի ու նույնպիսի դերակատարների մասնակցությամբ բեմադրությունն անհաջողության դատապարտվել: Հենց սկզբից հանդիսատեսի վրա իշավ թոնանթությունն, թե՝ հոգնաթության ոչնչ մի բան, որը չփարատվեց մինչեւ վերջ: Բոլորս կարկամել էինք, եւ միայն լությունը խզեց Լեւոն Հախվերդյանը, ամենայն խնամով վերուսեց բեմադրական յուրահանչյուր լուծումն ու դերակատարումը՝ անթաքույց դրվատանքով խոսելով դերակատարների՝ Սոս Սարգսյանի (Գրիգոր Թորգոմյան), Ժան Էլոյանի (Մակար), Շաֆե Թուխմանյանի (Շաֆե) եւ նույնիսկ երկրորդական կերպարների ընդունելի դերակատարության մասին, սակայն գտավ, որ վրիպումը վերամարմնավորման կերպին է վերաբերում: Նույնիսկ հաջողված դերակատարումների մեջ կան խոսքի, երանգի ինչ-որ ընդգծումներ, որոնք մեղանչում են

Տես էջ 2 ►

Պենդերեցկու հերշնշմամբ

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ

> «Ցարին յաղթեմ Ֆոյին երգով...
> Քաղցրանուագ այսու դեղով»:
>
> Սոսոնել Սրտենցի

Մեր երաժշտական կյանքում 2008 թվականը կարելի է համարել Պենդերեցկու տարի: «21-րդ դարի հեռանկարներ» 9-րդ փառատոնը նվիրված էր Կշիշտոֆ Պենդերեցկու ստեղծագործությունների: Մեկ շաբաթ Երևանի համերգասրահներում հնչում էին լեհ ականավոր կոմպոզիտորի բազմաբնույթ ստեղծագործությունները: Եզրափակիչ համերգում, որը տեղի ունեցավ «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահում, Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ Պենդերեցկու ղեկավարությամբ կատարեց կոմպոզիտորի «Կոնչերտո գրոսսո»՝ երեք թավջութակի եւ նվագախմբի համար եւ 2-րդ սիմֆոնիան, որ կոչվում է նաեւ «Սուրբ Ծննդյան սիմֆոնիա»:

Մեր խորհրդածությունների առարկան, բացի նվագից, նաեւ Պենդերեցկու «Stabat Mater» («Սգավայր») խմբերգն է, որը փառաբանին հնչել է Հայաստանի ակադեմիական կամերային կատարմամբ՝ Հովհաննես Չեմջյանի ղեկավարությամբ: Ելույթներն ընդունվեցին մեծ խանդավառությամբ եւ ունկնդիրներն ըստ արժանվույն գնահատեցին կոմպոզիտորի եւ կատարողների աղեսը, մասնավորապես Ակադեմիական կամերային, Ֆիլհարմոնիկ նվագախմբի, թավջութակահարներ Իվան Սոնիգեսեի, Անջել Բաուերի, Արսեն Նորասի եւ այլոց:

Եվ ֆանի որ «Կոնչերտո գրոսսո», «Stabat Mater» ժանրերը սկզբնավորվել են Միջնադարում, հարկ է պատմական մի էքսկուրս կատարել, որը կնպաստի մեր ասելիքին:

Մեծ էյնշտեյնը ասում էր՝ չգիտի, թե ինչպիսի զենք կկիրառեն 3-րդ աշխարհամարտում, սակայն դրան հաջորդող պատերազմը կվարեն... նետ ու աղեղով: Զանգվածային բնաջնջման զենքի գյուտը հեղաշրջեց 20-րդ դարի մարդկության, մասնավորապես ավանդույթների գիտակցությունն ու աշխարհայացքը: Եթե Բեթհովենի ավանդում մարմնավորված հերոսն իր նահատակությամբ հաղթում է ազատագրական պայքարում, ապա «միջուկային» պատերազմում ոչ հերոս կարող է լինել, ոչ էլ միակատար հաղթանակ, այլ միայն «պյուռոսյան հաղթանակ», որ պատվում են բոլորը՝ մեկը՝ շուտ, մեկը՝ ուշ:

2-րդ աշխարհամարտի ուռմբերն ու թնդանոթները վաղուց լռել են, սակայն դրանց արձագանքը, զոհերի ողբը հավերժացրել են Շոստակովիչի. Արամ Խաչատրյանի սիմֆոնիաներում, Կշիշտոֆ Պենդերեցկու «Հիրոսիմա» (1960 թ.), Սիոն դասասանի ակնկալիով կերտված «Dies irae» («Օրն զասման»), «Օսվենցիմ» (1967 թ.), Ալֆրեդ Շնիտկեի «Նագասակի» (1958), օրատորիաներում եւ բազմաթիվ այլ գործերում: կոտորածի անդառնալիությունն էր սպառնում, եւ 20-րդ դարը մարդը նմանվեց Դավիթ Սաղմոսերգուի խոսքով ասած, թափված ջրի:

Ինչպես հավաքել...

Ցարի դեմ ընդվզելու, այն դատապարտելու բազում խլյերի են դիմել: Օրինակ, ռազմի դաշտում մեկը կացնով հարձակվել է տանկի վրա, մյուսն իր մարմնով փակել է կրակակետը... Նույն պատերազմի օրերը հիշելով՝ ճարտարապետ մեծ գրող Կավաբատան գրել է. «Լամպի աղոտ լույսի տակ ես շարունակում էի կարդալ «Գենձի մոնոգատարին»... Դա իմ բողոքն էր ընդդեմ ժամանակի ոգուն: («Գենձի մոնոգատարին» 10-11-րդ դարերի կին գրող Մուրասակի Սիկիբուի վեպն է, որտեղ արտացոլված է «խաղաղության եւ անդորրի» մայրամուտ՝ Հեյանի բարերը, սիրո, գեղեցիկի եւ ազնվության պաշտամունքը): Սպառելով պատերի բոլոր միջոցները՝ նույնիսկ ամենանահավատ երկրի՝ Սովետական Միության կոմպոզիտորները հեսգիեսե սկսեցին առպվինել եւ գուլերգել Առաջին: Լենինին նվիրված «Պաթետիկ օրատորիայի» հեղինակ Գեորգի Սվիրիդովը կյանքի վերջում սկսեց հորինել կոնսկան բնույթի երկեր: Հայտնի են եւ Ալֆրեդ Շնիտկեի, Էդգար Հովհաննիսյանի գործերը՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագրի խոսքերով եւ այլն: Այդուհանդերձ, ինչպես նախկինում եւ մանավանդ այսօր, երբ «հեշացել» է ստեղծագործելը, առանձնանում են կոմպոզիտորների երկու տեսակ: Պենդերեցկին կյանքի կոմպոզիտոր է, խորն են նրա արմատները: Ավելորդ չէ նշել, որ նրա մեջ խոսում է նաեւ հայկական «գենը»: Սակայն խոր արմատներն ընդգծելով, նախ եւ առաջ նկատի ունենք այն, որ կոմունիստական, անհավատ Լեհաստանում ապրած Պենդերեցկին, կարելի է ասել, ավելի շատ հոգետոր կոմպոզիտոր է, քան՝ աշխարհիկ:

Հիրավի, նա դեռ 25 տարեկանում ստեղծել էր խմբերգեր՝ ըստ Դավթի սաղմոսների: (Ի դեմ, Յոհաննես Բրամսը նույնպես 25 տարեկանում էր ստեղծել իր առաջին հոգեւոր երկը՝ «Ave Maria» խմբերգը): Ավելացնենք նաեւ Պենդերեցկու «երգ երգոցը», «Առավոտյան ժամերգությունը», «Stabat Mater» խմբերգը, «Ցարյարանվերներ ըստ Ղուկասի» օրատորիան, «Աստծո գառը», «De profundis» («Ի խորոց») եւ այլն:

Երաժշտական հանրագիտարանը նշում է, որ Դմիտրի Շոստակովիչը իր վերջին՝ 15-րդ սիմֆոնիայում մեջբերել է դասագրքեր Տոնակինո Ռոսսինիի «Վիլհելմ Տել», Ռիխարդ Վագների «Նիբելունգի մատանին» օպերաներից, ինչպես նաեւ իր իսկ 6-րդ սիմֆոնիայի ֆինալից: Մնում է ավելացնել, որ Շոստակովիչը օգտագործել է նաեւ Վագների «Տրիստան եւ Իզոլդա» օպերայից սիրո լեյտմոտիվը, Վոլֆգանգ Մոցարտի 36-րդ սիմֆոնիայի ֆինալի ֆուգատոյի թեման: Նմանատիպ վարվել է եւ Պենդերեցկին՝ իր «Կոնչերտո գրոսսոյում» եւ «Ծննդյան սիմֆոնիայում» օգտագործելով Վագների, Բրամսի եւ այլոց երաժշտության հնչեղանգները: Սակայն, ի տարբերություն Շոստակովիչի, Պենդերեցկու մոտ ոչ ակնհայտ մեջբերումներ են, այլ սպեցիֆիկ աղեսներ, ակնարկումներ:

դառնալով նվագարանների իմաստաբանական նշանակությանը՝ Իոֆեն գրում է. «Հրեշակների, թագավորների, հովիվների համար կային, համապատասխանաբար, վիոլաներ, շեփորներ եւ ֆլեյտաներ, որոնց գործիքներ, որոնք կապված են հերոսների եւ հողի (հովվերգության, իդիլիայի) հետ» (Անդ., էջ 97): Արեւմտաեվրոպական երաժշտության զարգացումը կյանքի կոչեց նորանոր արտահայտչամիջոցներ, կատարելագործված նվագարաններ: Հատկանշական է, որ նվագարանների ճայնածավալի ընդլայնումը տեղի ունեցավ ավելի շատ դեմի մութ ու ահարկու բաները: Եվ եթե Ծննդյան երգերում ֆլեյտաները կարող են հիշեցնել երկնային արարությունը, դախտը, ապա, օրինակ, սերենտը կամ օֆիկլեիդ-բասը ի զորու են խորհրդանշել դախտում հայտնված օձը (ի դեմ, այս նվագարանների անունները տարբեր լեզուներով նշանակում են հենց օձ, արտիստս էլ նման են): Դժոխքի մասին պատկերացում են տալիս նաեւ կոնտրաֆագոտը, բասկլարնետը, տուբան եւ այլն:

Ներկայիս այսօրինակ ընդլայնումը պայմանավորված էր նաեւ «գաղափարների դրամայի», աշխարհացունց պատերազմների, մարդկային հոգու եւ ենթագիտակցության նորահայտ խորխորատները արտացոլելու անհրաժեշտությամբ: Գնալով դժոխքից դեմի դրախտ ճանապարհը ավելի երկարեց, եւ այն ձգվում է սանդարամետային կոնտրաֆագոտից մինչեւ երկնաթռիչ ֆլեյտաները...

Կոնցերտը սկսող թավջութակի առաջին իսկ կայծ-մոտիվից տեղի է ունենում «շոքայական ռեակցիա», որի հետեւանքով բռնկվում է ամբողջ նվագախումբը: Բուռն նախանվագից հետո վերհառնում է Տրիստանի լեյտմոտիվը: Շոստակովիչն էլ պահպանում է այդ մոտիվի բնօրինակի թավջութակային երանգը):

Ըստ Ն. Ռիմսկի-Կորսակովի, «Տրիստանի» հարմոնիաները տեղ-տեղ հասնում են «ցնցող գեղեցկության եւ ոլորտիկության» (М. Друскин, История зарубежной музыки, М., 1963, стр 47): Նույնը կարելի է վերագրել նաեւ մեղեդիական լեզվին, մասնավորապես այդ լեյտմոտիվին, եւ ամեն անգամ, երբ Պենդերեցկու կոնցերտում հակամարդ ուժերի բախումը հասնում է իր գագաթնակետին, ամրոդին հաջորդող ծիածանի պես հայտնվում է Տրիստանի սիրո լեյտմոտիվը, որը նույնիսկ նոտաների գեագրությամբ նմանվում է կամարի: Այս մոտիվը սկսող փոքր սեքֆայի (վեց աստիճան) թեւերով ճախրում է նաեւ լսողի հոգին, ակամա հիշում ես Վոլֆգանգ Գյոթեի խոսքերը. «Մեզ վեհացնում է հավերժ կանացին»: Ոչ պակաս գեղեցիկ է գուժկան զանգերից հետո հնչող դրվագը, որը հիշեցնում է Ռիխարդ Շտրաուսի վերջին նվագախմբային երգերի ռոմանտիկ զեղումները:

Նույնը եւ գալարափողերի հովվերգական կանչերն են, լարայինների թանձր, վեհաշունչ «երգն» է, որը բնորոշում են գերմաներեն «ցտրայս» (այսինքն լարային) անվանմամբ: Այս

Դանթեի «Աստվածային կատակերգությունը»

Ըստ Շոթենհաուերի, Դանթեի «Աստվածային կատակերգություն» պոեմում դժոխքի նկարագրությունը ավելի վառ է ստացվել, քան դրախտինը. «Առա դժոխքը պատկերելու համար որեղիցէ է Դանթեն վերցրել նյութը, եթե ոչ մեր իրական աշխարհից: Եվ այդտեղ՝ կարգին դժոխք է ստացվել: Իսկ երբ նա առջեւ խնդիր դրվեց պատկերել երկինքը եւ նրա երանությունը, ապա նա հայտնվեց անհաղթահարելի կացության մեջ, հենց այն պատճառով, որ մեր աշխարհը նյութ չի տալիս որեւէ նման բանի համար... Սա բավականաչափ ցույց է տալիս, թե ինչպիսին է մեր աշխարհը (Антология мировой философии, т. 3, М., 1971., стр. 698): Իսկ ինչպե՞ս է պատկերել իր «դժոխքը» եւ «դրախտը» նվագախմբային գույների, նրբերանգների տիրակալ, «տեմբրային դրամատուրգիայի» վարպետ Պենդերեցկին: Այս հարցի պատասխանը ունկնդիրներս ստացանք հիշյալ համերգին:

«Կոնչերտո գրոսսո»

Ինչպես Վերգիլիոսը Դանթեին, այնպես էլ կոմպոզիտորը, նույն ինքը՝ դիրիժորն ունկնդրին առաջնորդում էր ու ցուցադրում իր «կոնչերտո գրոսսոյի» հնչյունակերտ դժոխքի բոլոր ինը շրջանները, խավարանը եւ եռեմական պարտեզը...

Ընդհանուր ինչ կարող է ունենալ Պենդերեցկու կոնցերտը 18-րդ դարում բյուրեղացված «կոնչերտո գրոսսո» (մեծ կոնցերտ) երաժշտության հետ:

Նախ՝ մենակատարների եւ նվագախմբի «երկխոսությունը», այնուհետեւ՝ արագ եւ դանդաղ մասերի, դրվագների հերթագայությունը: Կարելի է նշել նաեւ Պենդերեցկու կոնցերտում գերիշխող դիսոնանսների միաբվարում թավջութակի կվարտա-կվինտային հովվերգական փոխկանչերը, լուսեղեն «ֆլաժոլետները» (սրնգաձայն վերնահնչյունները), կոնցերտը եզրափակող «ֆուգատոն», որում ձայներն իրար նմանակելով, հիշեցնում են Կորելլիի եւ Հենդելի կոնչերտո գրոսսոներում հաճախ հնչող ֆուգատոները:

Շարունակությունը էջ 9

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Գրախոսություն

Երգիծանքին վերայայտնությունը

«Նամակներ Պէյրութէն»- Հեղինակ՝ Արմէն Յարութիւնեան Գիրքի խմբագրող՝ Երուանդ Հ. Քասունի

ՎԱՀԷ ՄԵՄԵՐՃԵԱՆ

Ակնկալուէր, որ Արմէն Յարութիւնեան լոյս ընծայէր նամակներու իր հաւաքածոն, որովհետեւ անոնց թիւը հասեր էր 278 կամ աւելի եւ ժամանակն էր զանոնք օրաթերթում կամ ամսաթերթում էջերուն մէջ կորուստ փրկելու մասին մտածելու: Եվ ճիշդ է ըրեր Յարութիւնեանը՝ գործը վստահելով Երուանդ Հ. Քասունիի նման ճաշակաւոր եւ փորձառու խմբագրի մը:

Կակնարկեմ նախկին հայէրամայ, այժմ՝ ոչէրութաբնակ առեւտրական, հասարակական կեանքի մէջ ընտրհակալ վաստակ մը կուտակած, գրող, ինչոչ ինքզինքի կը սիրէ կոչել՝ նամակագիր, ոչէրութեան բազմաթիւ թերթերու մէջ երեւցող Արմէն Յարութիւնեանի 2008-ին հրատարակած «Նամակներ Պէյրութէն» հատորին: Թիւով հարիւր նամակներ են:

Յափշտակութեամբ եւ առանց դադարի ընթերցուելիք նամակներ են անոնք, որոնք անձի մը կամ անձերու չեն ուղղուած, այլ՝ ընթերցողներուն ու անոնց միջոցով՝ հասարակական կեանքին առնչուող ղեկավարներուն՝ ըլլան անոնք ախարհական թէ կրօնական, ըլլան անոնք կրթական, բարեգործական, միութենական կամ կուսակցական, ընտրեալ կամ ինքնակոչ հսկիչները՝ յատկապէս Պէյրութի հայ համայնքէն ներս:

Հարիւր նամակները սկսած են գրուիլ 1996-ին, իսկ նամակագիր կոչումը ոչատհական է: Պիտի կարդանք թիւ 4 նամակը՝ այդ կոչումին ծնունդին ոչատմութիւնը:

Երեւան կը գտնուի Արմէնը. կը հանդիպի Օննիկ Սարգիսեանին, որ իրեն վառաջարկէ երթալ հաւատի մը: «Հաւանութիւնս անմիջական կ'ըլլայ, ինչի որ ոչիտի հանդիպէի ինձմէ տարբեր մարդոց խումբի մը - գրողներ, մտաւորականներ: Այսինքն՝ վաճառականներէ տարբեր մարդիկ, տարբեր ախարհներ ներկայացնող»:

Սարգիսեան զինքի կը ներկայացնէ օրուան նախագահին, որ Ստեփան Կուրտիկեանը կրնար ըլլալ.

«Պարոնը անհանգիստ կերեւի, առոյգ գրական ոգի սեռը կը մտակէ», կը հարցնէ Կուրտիկեան:

«Ես յանկարծակիի եկած, ոչի մը ափոթեցայ, բայց յիշեցի, թէ ես ալ գրած եմ... Նամակներ, մեր գործի առնչութեամբ, տասնութ տարեկանէս սկսած, ուրեմն անմիջապէս յարեցի.

- Ես նամակագիր եմ...

- Նամակագիր,- գոչեց մեր բարեկամը, բայց ան հանդգնած չէր երեւեր:

- Եվ ձեր գործերը ինչի՞ հասոր են:

- Մօս 30-40 հատոր մը կ'ըլլան,- մտաբերելով այդխան մը տարիներու վրայ տարածուող գրած նամակներս:

- Նամակագիր է, է՛...,- եւ որոշ տարակուսանքով մը բաժնուեցանք:

Օննիկ Սագիսեան հազիւ կը զսպէր իր խնդումը՝ մտներով ծանկելով բեռանը»:

Եվ հանդգնել փորձելով ինքզինքի... կամ մեզ, որ նամակագիր կոչուիլն ալ կարեւոր է, Յարութիւնեան կը յիշեցնէ բոլորիս, որ թղթատարներ եւ կաթողիկոսներ ալ իրարու նամակներ կը գրէին, նոյնիսկ հիմա, կը յարէ գրողը՝ «մեր զոյգ վեհափառներն ալ նամակներով... կը նամակցին»:

Անմիջական է ան իր նկատողութիւններուն, ենթադրութիւններուն եւ բերած օրինակներուն մէջ ալ, արագ, հոյանցիկ բայց հաստ ոճով մը կը բացուի, կը պարզաբանէ եւ կը զարգացնէ իր միտքերը նամակներուն մէջ:

Յաջողած առեւտրականի առագութեամբ եւ տամտութեամբ տուած պատասխանը՝ Կուրտիկեանին, ճեմարտութիւն մը ունի:

Նամակագի՛ր...

Ըսուեցաւ, թէ 1996 թուականին առաջին նամակները հրատարակուիլ սկսան «Ջարթօնի»-ին մէջ: Առաջին տասնեակ մը եւ աւելի նամակներուն բովանդակութիւնը կը տամանափակուէր լրատուական կամ թղթակցութեան ծիրին մէջ, ան կարճ մեկնաբանութեամբ: Մեկնաբանութեան եւ հարցադրումի իր իրատւմը ընդարձակել սկսաւ Յարութիւնեան, երբ զգաց, որ ընթերցողները զինքի փնտռել սկսան: Իր յաճախակի մեղադրանքները՝ թէ սա կամ նա նամակը անարձագանգ մնացած է եւ կամ՝ իր մէկ հարցադրումը մամուլի նիւթ չէ դարձած ընթերցողներուն կողմէ, աւելի հեռահրաւական կը դարձնէր զինքի եւ իմացական երկխօսութեան վերածուիլ սկսան նամակները:

Թէ ինչո՞ւ «Ջարթօնի»-ով սկսան հրատարակուիլ նամակները եւ ոչ ուրիշ տեղ: Հալէպի կամ Պէյրութի մէջ Յարութիւնեան կուսակցական չէ եղած: Ծառայած է եկեղեցիին՝ նոյնիսկ սարկաւագ դառնալէն եսէ, տասնամեակներով Բարեգործականի ղեկավար կազմերուն մէջ եղած է՝ առանց Շրջանակային ատենադպրի կամ Կեդրոնականի անդամ ըլլալ յաւակնելու, հայրենասիրութիւնը պատանի տարիներուն իսկ առնասներ ունեցած է իր մօտ՝ մանաւանդ Հայրենական մեծ պատերազմէն եսէ, միայն մէկ տեղ ատենադպրութիւն վարած է՝ այն ալ Այնթապի Հայրենակցական միութեան մէջ՝ Պէյրութ, որովհետեւ այնքան ցիներ յաճախ փնտռած են կեանքին գործնականը հեռատնդող հայրենակիցներ՝ որոնց յաջող ղեկավար: Այս բոլոր առաքինութիւնները ունենալով, կակնկալուէր, որ Արմէն Յարութիւնեան ափսասկցէ «Ջարթօնի»-ին... մինչեւ այն օրը, երբ իր սուր ու նուրբ քննադատութիւնները կը խնայէր այդ թերթին տէրերուն եւ անոնց բարեկամներուն: Երկա՛ր, ան երկար մնաց ան «Ջարթօնի»-ին հետ. իր երկար ափսասկցութիւնը ոչէսք է բացատրել խմբագիր Պարոյր Աղոյանեանի տամտութիւնն ու քննադատութիւնը հանդուրժելու կարողութեամբ. բայց երբ թերթի խոհանոցին մէջ կեանքերը այրիլ սկսան, Յարութիւնեանի ախորժակն ալ փոխուեցաւ, հրատարակութեան տեղն ալ:

Հետաքրքրական է, որ Յարութիւնեան Պէյրութի «Արարատ»-ին մէջ ալ չդիմացաւ երկար ատեն: Ապա ան ուղղեցաւ դէպ «Նայիրի»-«Ծաղիկ»-«Արարատ» թերթերու եռանկիւնին: Վերջերս ան նոյնիկա հիւրընկալուեցաւ դաշնակցական «Ազդակ»-էն, ան ալ խնի մը թիւով միայն:

Ինչո՞ւ յարաւաղտ այս ոչոյնները թերթ թերթ: Պէտք է գիտնալ, որ Արմէն Յարութիւնեան հանդարտաբարոյ, տամտիս, կասկածոտ, բանականութեան տէր, հանդուրժող, իր ընդդիմախօսին հանդէպ յարգանքի անձ մըն է: Հաճելի եւ ուսանելի փորձառութիւնը ունեցեր եմ ես հրատարակելու Յարութիւնեանին նամակները՝ թիւ 80-85-էն եսէ մինչեւ թերեւս թիւ 200-ը, երբ «Նոր Օր»-ի խմբագրութիւնը կը վարէի 2000-էն 2005-ի վերջերը: Աւելին, իր բազմաթիւ այցելութիւնները ինծի՝ որոշս խմբագիր, գտած եմ շատ շահեկան եւ հաճելի: Փնտռուող խօսակից մը եւ ափսասակից մըն է միտս: Երբեմն առարկելի գտնելով հանդերձ հասարակական իր կարգ մը հայեացքները, երբեմ չեմ փորձուած չհրատարակել զինքի: Իր առողջ, կրթուած եւ հաստատակամ նկատողութիւնները գտած եմ ուսանելի եւ օգտակար՝ մանաւանդ հայաստանեան մեր մամուլին համար, որ բնատուր պահպանողականութեամբ կառաջնորդուի տակաւին:

Եւ հիմա, որ առաջին հարիւր նամակները հատորի մը կողերուն մէջ մէկտեղուած կը կարդամ, կ'անդրադառնամ որ ոչէրութեան խմբագիրները չէին կրնար հիւրընկալել զինքի երկար ատեն, պարզապէս որովհետեւ իր տամտութիւնը, աւելին՝ երգիծանքը, պահելով հանդերձ զուարթ ընթերցումի երեւոյթ՝ սուր քննադատութիւններով հարուստ էր եւ ծանր ելոյթ էին հաճելի կերպով ըսուած նկատողութիւնները անոնց համար՝ որոնք անսխալականի հանդերձանքով հարդարակի վրայ կը մնային: Եւ ոչեսք է գիտնալ, որ ոչէրութեան հայ հասարակութեան ընտրեալ կամ ինքնակոչ հսկիչներուն մէկ կարեւոր մասը չէր կրնար հանդուրժել այն երգիծանքին, որ Յարութիւնեանի նամակներուն հիմնական ասպնջն էր, գոյութեան իմաստն ու յաջողութեան բանալին: Ինչպէս հաճելի սովորութիւնը եղած է սահմանափակ հայեացքով մարդոց, անոնք միտս մերժած են կառուցողական քննադատութիւնը երգիծագիրին՝ ան ալ յաջող երգիծագիրին, որ այսօր կը ներկայանայ մեզի Արմէն Յարութիւնեանով:

Յարութիւնեանի թափառումներուն բացատրութիւնը կը գտնեմ, ուրեմն, ապրուտդ եւ գոյատեւդ այն անհանդուրժողութեան մէջ, զոր ոչէրութեան կամ սփոփիմահայ թերթերու տէրերը կը պահեն որոշ վախեր, իրենց անհոգեւորութիւնը պաշտպանելու համար:

Անոր սլաքները յաճախ ուղղուած են Լիբանանի հայ վարժարաններու պատասխանատուներուն, անուղղակիօրէն՝ Ազգային առաջնորդարանին, կղերական դասուն, հասարակական կեանքն ներս պաշտօն ստանձնած անհատներուն, կուսակցութիւններուն, հասարակութեան մէջ նշմարուող ափացաւութեան, հայ դպրոցին իր աշակերտներէն պարարուելու ողբերգական երեւոյթին, հայ գիրքի հանդէպ տարուած անտարբերութեան, ուսուցիչներու լքեալ վիճակին, վերջապէս՝ հասարակութեան գրեթէ բոլոր թերութիւններուն ու բացթողումներուն՝ որոնք, ըստ իրեն, սրբագրելի են՝ բայց լռուած են իրենց ճակատագրին: Արմէն Յարութիւնեանի գործը ընթերցելու պահուն չես կրնար չյիշել Լեռ Կամսարը՝ մանաւանդ անոր նախայեղափոխական ֆելիեթոնները լուրջ երգիծանքը: Անոր նման եւ թերեւս անգիտակ անկէ, Յարութիւնեան կերպարներ չէ ստեղծած՝ հասարակութեան մեղքերը բարելով անոր վրայ եւ ծիծաղի առարկայ դարձնելով զայն: Անոր երգիծանքը չէ ուղղուած անհատներու, այլ՝ հասարակութեան թափթփածութեան պատասխանատուներուն: Երգիծանքը ծագուած չէ իր մօտ, այլ բնական սահմանով մը կը մտնէ ընթերցողին տրամադրութեան մէջ եւ յարուցած հարցերուն ընդմէջէն բացայայտ կերեւի Յարութիւնեանի տրակտատիկն ու կարեկցանքը հայ դպրոցին, հայ ուսուցչին, հայ եկեղեցիին, հասարակական կարգ ու սարքին հանդէպ: Անոր մասը վերին կամ վերերուն վրայ դրուած՝ սրբագրութիւն կը պահանջէ:

Երկար ատենէ ի վեր նման գիրքի մը երեւումը զգալի դարձեր էր կարծէմ: Նրբանկատ քննադատութեամբ կառուցուած, տամտիս պատումներով ընթացող, Հալէպի կարոսալի կեանքին վերյուշներով համեմուած նամակներ են «Նամակներ Պէյրութէն» գործը, որուն խմբագիրին՝ Երուանդ Հ. Քասունիին ալ կերթայ յաջողութեան արդար բաժին մը, մանաւանդ լեզուի մաքրութիւնը եւ մատուցումի ձեւը նկատի երբ ունենանք:

Անհրաժեշտ է, որ Արմէն Յարութիւնեան չսահմանափակուի առաջին հարիւրեակով: Նամակներու թիւը ըստով պիտի հասնի երեք հարիւր եւ յաջորդական հատորներուն մէջ Յարութիւնեանի արձարձած խնդիրներն ու

Բ էջից

Պենդերեցկու հերշնշմամբ

հուլերը): Պենդերեցկու սիմֆոնիայում մուլեգնող ամբոխային խայլերգը, «մահվան պարը», չարի խոսխմանը, Շոստակովիչին արձագանքող պայթուցիկ կուլմինացիաները, այս ամենը բախվում է սիրո լեյտմոտիվին՝ «Լուռ գիշեր, սուրբ գիշեր», «Ծննդյան երգ»-ին, Բրամսի «Օրորգայինի» տեսիլվող գոռվալից, հրեշակային հնչեղանգներին, եւ մահը պարտվում է:

Թվում է՝ տարօրինակ է, որ համայն մարդկության Փրկչի ծննդյան սիմֆոնիան ավարտվում է վիթխարի հնչյունագանգվածի, հնչյունային «գալակտիկաների» խոնարհումով եւ լռության մեջ մարելով, չէ՞ որ այդ տիեզերական իրադարձությունը սովորաբար նշանավորվում է հարթակի շեփորների եւ թմբուկների ոռոմտոնոս թնդյուններով: Սակայն ասված է՝ ով խոնարհվում է, նա կբարձրանա: Ահա նաեւ այստեղ է սիմֆոնիայի նմանությունը Ռաֆայելի «Տիրամորը», ուր աչքերում զգացվում է թե՛ անհուն սեր՝ հանդեպ մանուկ Հիսուսին, թե՛ տագնապ, արդյոք խաչելության կանխագուշակում, թե՛ փրկագործության վեհության գիտակցում: Այստեղ «կանխալսվում» են խաչի վրայից հնչող Հիսուսի խոսքերը. «Այստեղ, աշխարհում նեղությունն ունիս, սակայն քաջալերեցէք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին» (Յոհ. ԺԶ, 33):

Ահա այստեղ մենք մոտեցանք Պենդերեցկու «Ստաբաս Մատեր» կոթողին, որը կերտվել է 1962 թվականին:

«Ստաբաս Մատեր»

Խաչի դիմաց կանգնած Տիրամոր ողբին նվիրված առաջին մեզ հայտնի ստեղծագործությունը 11-12 դարերում արդեն Անանուն Անեցու «Տիրամայրն» տաղն է:

Տիրամայրն հանդէպ որդւոյն ի խաչին կայր տրտմագին

Եւ լսելով ըզձաւուն հառաչմամբ լայր ցավագին,

Ի փուռ ոլորակն դիտելով որք, կոծ, վայ տայր իր անձին.

«Աչացս լոյս, որդեակ իմ Յիսուս, ես ընդ քեզ մեռանիմ»:

Արեւմտաեվրոպական երաժշտության մեջ Տիրամոր ողբը արացոլող երգերը կոչվում են «Ստաբաս Մատեր»: Առաջին նմուշը մի ճարտիկ էր Մարիամի արցունքներով ջրված, որը բողոքել ու բացվել էր գրիգորյան խորալի ծոցում: Խորալը հոմոֆոնական (հեռագայում նաեւ գեռանական) շարակներն են, որոնց հիմքում ընկած է սաղմոսերգությունը: Եվ խորալի «Ալէլույա» փառաբանական հաչաթի ընդլայնումն առաջ բերեց «սեկվենցիա» («հետեւում եմ» բառից), կամ «տրոպս» կոչված երգերը: Այս հավելումը երգում էին առանց խոսքերի՝ ձայնավորներով, տնական գեղգեղանքներով (յուբիլացիա):

Օգոստինոս Երանելին ասում էր, թե «առանց խոսքերի երգեցողությունը բերկրանքի մեջ լուծված ոգու ձայնն է» (Музыкальная энциклопедия, т. 4, М., 1978 стр. 904): 9-րդ դարում Շվեյցարիայի տուրք Գալեն վանքի վանական Նոտկեր Բալբուլուսը (Կակազողը) յուբիլյացիաներին կցեց խոսքեր՝ հեշտացնելով երկարաձիգ մեղեդիների հիշելը, վերարտադրելը: Ըստ երաժշտագետ Յու. Խոլոդովի, Նոտկերի գյուտը հնարավորություն տվեց նոր, սեփական երաժշտություն հորինելու (Անդ, էջ 904): «Ստաբաս Մատեր»-ի սեկվենցիան ներմուծվեց եկեղեցու ծիսակարգ 13-րդ դարի 2-րդ կեսում: Խոսքերը վերագրում են Յակոտոդ Բենեդեթցիին, երաժշտությունը՝ Դ. Ժոսիգին: Այն կատարվում է «Մարիամի Յոթ Վերք»-ին: Սկսած 15-րդ դարից՝ այդ տեսքի հիման վրա վեր խոյացան Ժոսկենի, Պալեստրինայի, Պերգոլեզիի, Դվորժակի գլուխգործոցները: Քանեռորդ դարում «Ստաբաս Մատեր» կերտել են Շիմանովսկին, Պուլենկը, Պենդերեցկին: Ինչպես նշվեց, վերջինիս «Ստաբաս Մատեր»-գրված է երեք երգչախմբերի համար:

Տեսնոր ձայների խնկաբույր սկզբից հետո ահա այստեղ է շարադրվում «Ստաբաս Մատեր»-խոսքերը՝ 1-ին խմբի բասերը երգում են 1-ին վանկը՝ «Ստա», 2-րդ խմբի բասերը գումարում են 2-րդ վանկը՝ «բաս», 3-րդ խմբի բասերը՝ «Մա», կրկին 1-ին խումբը՝ «տեր» եւ այդպես շարունակ: Այսպիսով երգը հնչում է «խաչածեւ», եւ խոսքն էլ այստեղ խաչելության մասին է: Բացի այդ, հիշյալ փոխկանչերը (անտիֆոնիա), մեկ հնչյունով մեկ վանկ երգելը (սաղմոսերգություն), լատիներեն լեզուն հնագույն երանգ են հաղորդում գործին: Պենդերեցկին մեծ վարպետ է զանգվածային տեսարանների: Կիրառելով շեշտը, արտասանությունը, վանկարկությունը, ելաստերը (հարակից հնչյունների միաժամանակյա հոծ հնչումը), երեք խառաձայն երկսեռ երգչախմբերը 48 ձայնի բաժանելը եւ այլ հնարքներ՝ վարպետը վերստեղծում է ոչ միայն Գողգոթայում հավաքված ամբոխի, այլեւ համայն մարդկության ընդհանրական կերպարը: Եվ ահռելի լարվածության հասնող ձայնառությունները, խմբերի ձայների վանկերին գումարվելով, փշում են խավարի, չարի «ամբարտակը»: Բոլորը միաբերան հռչակում են «ՔՐԻՍՏԵ» անունը, որից հետո խմբերը հերթով կրկնում են Փրկչի անունը – արձագանգում է ամբողջ տիեզերը:

Երկրորդ մեծ ալիքն ավարտվում է «Գլորիա» (փառք) վերջին խոսքով, որը հնչում է իբրեւ փրկության ԱՎԵՏԻՍ... ■

Գյումրեցիներ

> «Գրիգորյանը իսկական դիմանկարչին հատուկ ձիրք ունի: Շատ ուրախալի է, որ նա կերպարվեստի այդ ամենաբարդ ժանրի առպարեզում լավ արդյունքների է հասել: Սուր աչք ունի, բնորդի արտաքին ու ներքին նմանությունը որսալու եւ միաժամանակ կտավի գեղանկարչական որակը պահելու ընդունակություն»:
>
> **Մարտիրոս Սարյան**

Գեղանկարիչ Ալեքսանդր Գրիգորյանի տանն եմ: Ես հարցազրույց եմ վերցնում նրանից, իսկ նա ինձ է դիմանկարում: Անսովոր իրավիճակ է: Ավելի շատ նա է հարցեր տալիս, իսկ ես շատախոս եմ, նույնիսկ՝ ֆիչ անց երգում եմ: Նկարիչն ուրախ է՝ նկարը լավ է սացվում, իսկ իմ մտքում՝ նյութս է: «Գյումրեցիների մասին ակնարկաշար եմ գրում: Անշուշտ, Ձեզ էլ ոմիսի ընդգրկեմ նրանց շարքում», ասում եմ նկարչին: «Ինչ խոսք, ժամանակին իմ ծննդավայրն իսկապես շատ մշակութային քաղաք էր: Հենց այդ տարիներին էլ ձեւավորվել է իմ գեղարվեստական ճաշակը: Ուրիշ կերպ լինել հնարավոր չէր, որպես իսկական գյումրեցի ասում է արվեստագետը,- Ախր, Փափազյանին, Հրաչյա Ներսիսյանին ու Սիրանույշին առաջին անգամ իմ հայրենի քաղաքի թատրոնի բեմում եմ տեսել: Ժամանակին հենց Լենինականի ոպերայահում էր ցուցադրվում Ռեմբրանդտի «Միլենայի երգը» կտավը, որ հաճախ էի այցելում: Չգիտեմ, նորից կկենամ, որ Գյումրին աշուղների ու գուսանների քաղաք է եղել, այդ մասին բոլորը գիտեն: 15-16 տարեկան ոպասանի էի, երբ մայրաքաղաք տեղափոխվեցի՝ շարունակելու ուսումս: Բնականաբար, տեղին կլինի ասել, որ բոլոր գեղեցիկ ձգտումները, արվեստի նկատմամբ ողջ սերս ծննդավայրս է տալիս-ոչ միայն ինձ»:

Սարյանի մասին ոպատմեմ՝ խնդրում եմ նրան: Ալեքսանդր Գրիգորյանի աչքերը փայլում են ոգեւորությունից, ու նա ընդհատում է նկարելը՝ «Գիտե՞ս, ես Սարյանի մասին կարող եմ անվերջ, անդադար խոսել, ասում է արվեստագետը, Վարդեսի հետ իմ ծանոթությունը կայացել է 1947-ին, երբ ես ավարտում էի Թբիլիսիի անվան նկարչական ուսումնարանը: Այդ ժամանակ նա ոմիսի գլխավորեր ավարտական քննական հանձնաժողովը եւ ինձ էր վստահված Սարյանին ուսումնարան ուղեկցելու ոպարտականությունը: Եվ ահա ոպայմանավորված ժամին ես նրա տանն եմ, Վարդեսն ինձ թեյով հյուրասիրեց, հետո մենք ուղեւորվեցինք ուսումնարան: Մինչ հանձնաժողովին մոտենալը, նա ինձ ասում է՝«Արի առաջինը քո նկարը նայեմ, տեսնեմ ինչոիսի նկարիչ ես դու, Ալեքսանդր»: Ու ես Սարյանին եմ ցույց տալիս «Հունձ» կոչվող իմ կտավը: Նա երկար- երկար նայեց իմ նկարին ու գոհունակ դեմքի արտահայտությամբ ասաց. «Դու արդեն նկարիչ ես, Ալեքսանդր»: Եվ դա իմ կյանքում լաված ամենագեղեցիկ արտահայտությունն էր, որն իմ հասցեին ասել էր ոչ ավել, ոչ ոպակաս մեծն Սարյանը: Այս հանդիպումը հետագայում բարեկամության վերածվեց, ստեղծագործական նորանոր ձեռքբերումների առիթ հանդիսացավ: Մինչ այդ ես եռեռտում էի թողել իմ ծննդավայր Լենինականը, Մերկուրովի անվան գեղարվեստի դպրոցը, արդեն նաեւ Թբիլիսիի անվան նկարչական ուսումնարանը: Ինձ գեղարվեստաթատերական ինստիտուտն էր սպասում, ինչպես նաեւ կյանքը՝ բազում հանդիպումներով եւ ոգեւորություններով», ոպատմում է նկարիչը:

Ալեքսանդր Գրիգորյանը բազմաթիվ հետաքրքրություններ ունեցող արվեստագետ է: Նրա ասելիքը գծանկարի, կտավի, քանդակի ու բանաստեղծության տեսք ունի: Ինչպես նկարիչն է ասում՝ նա իր ուսուցիչ Սարյանից կյանքում ամենակարեւոր սկզբունքն է յուրացրել՝ կյանքը սիրելու ունակությունը: Կյանքը լույսն է, վառ գույներն են եւ այդ բոլորը սերն է, որոնցով առատորեն շաղախված են Ալեքսանդր Գրիգորյանի նկարները: Նա շարունակում է վրձնել իմ ոպատկերը, ոգեւորված է ու ներշնչված, ես՝ նույնպես: Շուտով նկարը ոպատրաստ կլինի, ես հազիվ եմ զսպում իմ հետաքրքրությունը՝ կտավին չնայելու համար, բացի այդ Ալեքսանդր Գրիգորյանի կտավները դիտելու նորովի ցանկություն է առաջանում ինձ մոտ:

Ես կրկին սենյակից սենյակ եմ անցնում՝ ըմբռնելու Ալեքսանդր Գրիգորյանի լուսառաս ու կենսաբաս գույները, որոնք նրա ոպայծառ եւ ազնիվ ներաշխարհի արտացոլքն են: Ամեն անգամ որեւէ նկարչի արվեստին ծանոթանալիս սիրում եմ կրկնել՝կտավը նկարչի բնավորությունն է: Եվ ահա նրա նկարներից մեզ է ներկայանում նկարիչը:

Կյանքը, մեզ շրջապատող աշխարհը, իրադարձությունները ու երեւույթները, մարդ արարածն իր հետաքրքրություններով ու իրեն հուզող հարցերով հազարամյակներ շարունակ կերպարվեստագետների հետաքրքրության առարկան են եղել: Սակայն այդ ամենի ոպատկերման, կերարտադրման եղանակները, անշուշտ, ժամանակների ընթացքում մեծ փոփոխություններ են կրել: Ալեքսանդր Գրիգորյանի նկարչի աշխարհում դրանք իր ոպատկերացումներին ու ապրումներին համապատասխան ձեւ ու բովանդակություն են ստացել, նրանք հենց նկարչի բնավորությունն են ձեռք բերել: Արվեստագետն իրականությունն այս կերպ է տեսնում եւ ընկալում, նա ազատորեն ընդառաջ է գնացել իր ոգեւորություններին ու ցանկություններին՝ համատեղելով ոպիը, ժամանակը զգալու ունակությունը եւ մարդկանց գնահատելու իր կարողությունները: Ինչոիսին էր Հայաստանը 50-60-ական թթ., ինչոիսին էին մեր արվեստագետները ու մտավորականները այն տարիներին: Այս հարցերի ոպատասխանները Ալեքսանդր Գրիգորյանի կտավներն ու գծանկարներն են՝ Սարգիս Սարյանի, Վիլյամ Սարոյանի, Մարշալ Բաղրամյանի Մինասի, Պարույր Սեւակի, Գոհար Գասպարյանի, Տիգրան Պետրոսյանի դիմանկարները:

Հայեցի արվեստագետ է Ալեքսանդր Գրիգորյանը: Նրան միշտ էլ հետաքրքրել է սեփական ժողովրդի ոպատմական անցյալն իր հերոսական դրվագներով, նա ոպատում է հայ երգն ու բառը, ինչու չէ հայրենի եզերի ամեն թուփն ու քարը: Այս բոլոր հետաքրքրությունները նա շաղախել է Հայաստանի առատ լույսով ու ջերմությամբ՝ «Ալմաստ», «Կռաստոսի գլուխը Արտավազդ թագավորի առաջ», Հեթանոսական տոն Գառնիում», «Անուշն ու Սայաթ-Նովան», «Հովհաննես Թումանյան»: Ինչպես արվեստաբան Շահեն Խաչատրյանն է նկատում՝ «Ալեքսանդր Գրիգորյանի արտահայտչական լեզուն, գունային մտածելակերպը մի կողմից առնչվում է իմպրեսիոնիստներին, մյուս կողմից՝ արդի գեղանկարչությանը, մասնավորապես Մարտիրոս Սարյանի արվեստին»:

Նկարիչը շարունակում է ինձ դիմանկարել: Այս անգամ ես թերթում եմ նրա լուսանկարչական ալբոմը: 1962-ի «Հինգի ցուցահանդեսի» լուսանկարն է՝ հերթականությամբ կողք- կողքի նստած են Հենրիկ Սիրավյանը, Արփենիկ Ղափանցյանը, Ալեքսանդր Գիրգորյանը, Լավինյա Բաժբեուկ-Մելիքյանն ու Մինասը: Չգիտեմ թե ինչու՝ ինձ թվում է, որ այս ցուցահանդեսը Գրիգորյանի ամենահիշարժան ու սիրելի ցուցահանդեսներից է՝ սիրելի կնոջ ու ընկերների հետ միասին, ուժերի ծաղկման շրջանում եւ հայ կերպարվեստի ամենալավ տարիներին՝ 60-ականներին: Նկարիչը շուրջ 100 ցուցահանդեսի է մասնակցել, երկու տասնյակից ավելի անհատական ցուցահանդեսներ է ունեցել, որոնց աշխարհագրությունը շատ ընդգրկուն է՝ Ռուսաստան, Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Հարավսլավիա, Կանադա, Բուլղարիա եւ այլուր:

Ալեքսանդր Գրիգորյանի կտավներն այսօր ցուցադրվում են Տրետյակովյան, Արեւելյան ժողովուրդների թանգարանում, սակայն ոչ՝ Հայաստանում: 2001-ին Քրիստոնեության ընդունման 1700-ամյա հոբելյանին նվիրված հանրապետական ցուցահանդեսին ՀՀ վաստակավոր նկարիչ Ալեքսանդր Գրիգորյանի ներկայացված «Քրիստոս» կոչվող 2 կտավները չցուցադրվեցին: Սակայն 1960 եւ 1970 թթ. ստեղծված նկարները վերջերս գտան իրենց հանգրվանը: Այսօր Գրիգորյանի ստեղծագործությունները զարդարում են Տորոնտոյի Հայ Կաթողիկե Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գավիթները: Նկարներից մեկը եկեղեցուն նվիրել է հենց նկարիչը, մյուսն էլ գնել է կանադահայ բարերար Կարո Մարտիրոսյանը եւ կրկին եկեղեցուն նվիրել: Նկարիչն, անշուշտ, տրտնջած է մեզանից, այլապես չէր բարձրաձայնի այս ամենի մասին, սակայն լավ է, որ կան մարդիկ՝ թեկուզ սփյուռքում եւ արտերկրում, որ գնահատում են մեր արվեստագետին:

80-ամյա նկարիչն ավարտեց իմ դիմանկարը: Ես նայում եմ ինքս ինձ՝ ահա, թե ինչոիսին է իմ անդրադարձը Ալեքսանդր Գրիգորյան նկարչի աչքերում:

Հ. Գ. Ալեքսանդր Գրիգորյանի համար դեռեւս շարունակվում է հոբելյանական տարին: Քանի որ 80-ամյա նկարիչն այսօր վաստակոր է, ցանկանանք նրան առատություն եւ բարձր տրամադրություն: ■

ԱՆԱՀԻՏ ԿՈՐՅՈՒՆ

Մի դիմանկարի ու մի կյանքի պատմությունից



Ալեքսանդր Գրիգորյանը Մարտիրոս Սարյանի հետ՝ իր անհատական ցուցահանդեսի բացմանը, 1968 թ.

Հենրիկ Սիրավյան, Արփենիկ Ղափանցյան, Ալեքսանդր Գրիգորյան, Լավինյա Բաժբեուկ-Մելիքյան, Մինաս Ավետիսյան, 1962 թ.

Անահիտ Կորյունի դիմանկարը, 2007 թ.

Հարցադրումներ

Անմոռանալի Սերգէյ Մերգելեանը...

(հանդիպում մը Հռոմի մէջ)

Սովետական վարչակարգէն այլախոհ նկատուած, տաղանդաւոր մաթեմատիկոս Ս. Մերգելեանին

Օրեր առաջ Լոս Անջելէսում վախճանվեց հայ ականաւոր գիտնական, ակադեմիկոս Սերգեյ Մերգելյանը: Նրա գիտական կենսագրությունը բացառիկ էր հայ (եւ ոչ միայն) իրականության համար՝ 21 տարեկանում դոկտոր, 28-ում՝ ակադեմիկոս: Նրա ղեկավարությամբ կազմակերպված երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը աշխատանքներ է կատարել հաշվողական մեքենաների արտադրության ուղղությամբ, որի շնորհիվ նաեւ Հայաստանը կարեւոր դեր ունեցավ խորհրդային տարիներին: Ղակոր Հակոբյան փողոցի վրա վեր բարձրացող բարձրահարկ կառույցը երեւանցիներին հայտնի է Մերգելյան ինստիտուտ անունով: Սակայն ինչպես Մաշտոցի պողոտայի Մարգարյանի հիվանդանոցի, նաեւ Մերգելյան ինստիտուտի ժողովրդական անվանակոչումները չեն վավերացվել կառավարության կողմից:

Ներկայացվող հուշ-պատմությունը Սերգեյ Մերգելյանի մասին ստացանք Մեր Սամուէլ-Մուրատեան վարժարանի ներկայիս տնօրեն, Մխիթարյան միաբան Հայր Հարությունն Պզտիկյանից:

«Ան առաջիններէն էր, որ ծայն բարձրացուց «գուլակ»-ներու գոյութեան դէմ, եւ Հայաստանի ղեկավարները չկրցան պատասխանել այդ հանճարեղ երիտասարդը, որ 20 տարեկանին կիսրեմէթիկայի դասախօսութիւններ կու տար Հռոմի համալսարանին մէջ, ափ ի բերան ձգելով ներկայ փոդէտսերները: Այդ օրերուն, ես ինքս՝ համալսարանական, ներկայ գտնուեցայ վերջին դասախօսութիւններուն եւ ականատես եղայ այնտիսի յուզիչ դէպքի մը, որ մինչեւ այսօր աչերս կը լեցուին երբ յիշեմ: Հրաժեշտի ընթրիքն էր, համագումարի մասնակցող յանձնախումբերուն, կազմակերպուած Իտալիոյ Պետական ակադեմիա Տէր Լինչէի կողմէ: Յաջողած էի աթոռ մը գտնել որպէս կամաւոր քարտուղար: Փոդէ. Արմէլլինին, նախագահը, ուզեց որ Միացեալ Նահանգներու եւ Խորհրդային պատուիրակութիւններու նախագահները պահ մը մոռնան երկաթէ վարագոյրը եւ յանուն գիտութեան բաժակները բարձրացնեն: Մեր երիտասարդը կը նախագահէր Խորհրդային պատուիրակութեան. բարձրացաւ ու ներկայացաւ՝ Սերգեյ Մերգելեան: Ոտի կանգնեցաւ կայծակի արագութեամբ Միացեալ Նահանգներու պատուիրակութեան նախագահը, բարձրացուց բաժակը եւ ներկայացաւ՝ Հէրրի Կարարեան: Իրար փաթթուած պահ մը անշարժ մնացին, իմ ալ աչերս լեցուեցան: Ներկաները բան չէին հասկնար: Փոդէ. Արմէլլինի կարծեց, որ գիտութիւնը հրաշք մը գործած է, ուրախութեամբ բացագանչեց. «երկաթէ վարագոյրը պատռեցաւ»: Մերգելեան թաց աչերը սերթելէ վերջ, դարձաւ ներկաներուն եւ ընտիր անգլերէնով ըսաւ. «Պարզապես երկու հայեր իրարու հանդիպեցան...»:

Այսօր ո՞վ կը խօսի Մերգելեանի մասին: Չգնդակահարեցին զինք, բայց բարոյապէս ոտքի կոտրի մը վերածած, աննշան անկիւն մը նեստելով, ոչնչացուցին զինք որպէս գիտնական, ողջ թաղելով հանճար մը, որ ամէն օր չի ծնիր»:

Ե. Ե. ՊՃՏԻԿԵԱՆ

ՀՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Եվ մի շողարշիր կերպարդ բնատուր

Պարզ թվացող հարցերի մի շարան հաճախ լռելյայն ուղեկցում է ստեղծագործող անհատին եւ սադրում նրան խորապես ճանաչել իր բաժին իրականությունը, ճշտել ընթացքի մի շարք կողմնացույցներ: Այսպես՝ գրողի, արվեստագետի ճանաչումն ու գնահատանքը ուղղակի կախում ունեն նրա հաղորդակցությունից ու բնակության վայրից: Երկակի սանդղակները գործում են գեղարվեստի մարզում...

«Մենք բնավ չենք ուզում մեկուսացում եւ առճակատում: Սակայն Բալթյան երկրները եւ Շվեդիան հարգանքի տակ են դնում Ռուսաստանի հետ եվրամիության ռազմավարական գործընկերության գծի նպատակահարմարությունը», ընդգծել է Ռոյթերի աղբյուրը:

Հինգշաբթի օրը Ֆրանսիայի արտգործնախարար Բեռնար Կուշները հայտարարել էր, որ իր երկիրը չի պահանջում, որ Մոսկվայի դեմ տնտեսական պատժամիջոցներ ձեռնարկվեն Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախության ճանաչման պատճառով:

Ուկրաինան կստեղծի հզոր միջուկային էներգետիկ համալիր

Ուկրաինայի վարչապետ Յուլիա Տիմոշենկոն հայտարարել է, որ իր երկիրն ստեղծելու է հզոր միջուկային-էներգետիկ համալիր, որը կապահովի էներգետիկ անկախություն:

Նախատեսվում է ավելացնել ուրանի արդյունահանումը եւ ուրանով երկրի ինքնապահովումը ներկայիս 30-ից հասցնել 100 տոկոսի:

Ուրանի պաշարներով Ուկրաինան զբաղեցնում է աշխարհում 6-րդ տեղը, իսկ Եվրոպայում՝ 1-ին տեղը: Բայց մինչեւ օրս ուկրաինական ատոմակայանների միջուկային վառելիքի երկու երրորդը ներմուծվում է Ռուսաստանից: Ուկրաինայում ներկայում գործում է 4 ատոմակայան, իսկ Չեռնոբիլի ԱԷԿ-ը 1986-ի խոշոր աղետից հետո կանգնեցված է, նշում է ՌԻԱ գործակալությունը:

«Միջուկային-էներգետիկ համալիրը մինչեւ 2015 թվականը կառուցելու համար անհրաժեշտ է ուժեղ ֆինանսավորում», ընդգծել է Տիմոշենկոն, ավելացնելով, որ դա պետք է ապահովվի պետբյուջեի ուղղակի ծախսերի եւ պետական եռաբիրների տրամադրման հաշվին:

«Մահդիի բանակը» կասեցնում է իր գործունեությունը

Իրաքի շիա գրոհայիններն առաջնորդ Մուքթադա ալ Սադրը հայտարարել է, որ կասեցնում է «Մահդիի բանակ» ռազմականացված կազմակերպությունը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Հայտարարության մեջ ընդգծվում է, որ իր այն կողմնակիցները, որոնք կնրեմեն ընդունված որոշումը, այլեւս չեն համարվի «Մահդիի բանակի» անդամներ:

Ավելի վաղ հաղորդվել էր, թե ալ Սադրը մտադիր է «Մահդիի բանակը» դարձնել բացառապես քաղաքական կազմակերպություն եւ լիովին հրաժարվել զինված պայքարից: Ենթադրվում է, որ նրա հետեւորդները ուշադրությունը կբեւեռեն կրթության, կրոնի եւ սոցիալական քաղաքականության խնդիրների վրա:

Հունիսին «Մահդիի բանակը» առանց մարտի հանձնել էր Ամարա քաղաքը, որն իրաքի հարավում շիա գրոհայինների վերջին պատվարներից մեկն էր: Ավելի վաղ Մուքթադա ալ Սադրը իրաքի իշխանություններին առաջարկել էր զինադադար կնքել:

ԳՈՒՅԺ

Հայերի հավատարիմ բարեկամը, պատմական արդարության համար մարտիկը

Վախճանվել է Գի Դյուկոլոնեն

Երկուշաբթի օրը Փարիզում 88 տարեկանում վախճանվել է Ֆրանսիայի խորհրդարանի երկարամյա կոմունիստ պատգամավոր, ֆրանսահայերի հավատարիմ բարեկամ Գի Դյուկոլոնեն:

1937-ին անդամագրվելով Ֆրանսիայի Կոմկուսին (ՖԿԿ), մեսաղարձ բանվոր Դյուկոլոնեն նացիստական Գերմանիային իր հայրենիքը հանձնվելու առաջին իսկ օրվանից մտնում է պայքարի մեջ զավթիչների դեմ, ընդգրկվում Դիմադրության շարժման շարքերում: 1942-ին մատնության հետեւանքով նա ձերբակալվում է գեստապոյի ոճիրի կողմից ու ընդհատակյա գործունեության համար դատապարտվում: Երկու տարի ֆրանսիական բանտում անցկացնելուց հետո նա նեսվում է Բուխենվալդի համակենտրոնացման ճամբար, որտեղից ազատվում է խորհրդային բանակի կողմից: Հետագայում նա կգլխավորի համակենտրոնացման ճամբարների նախկին գերիների «Բուխենվալդ Դորա» ընկերակցությունը, հսկայական բացառական աշխատանք կկատարի, մասնավորապես, դպրոցներում, այլ կրթական հաստատություններում, ՖԿԿ ազգային քարտուղար Մարի-Ժորժ Բյուֆեի խոսքերով՝ «հիշողության իր պարտին հավատարիմ, երիտասարդներին պատմելով նացիզմի սարսափների ու «Դիմադրության» պատմի մասին»: Խոսելով հրեաների հոլոքոստի մասին, նա միշտ ընդգծել է, որ այն եղել է 20-րդ դարի երկրորդ ցեղասպանությունը հայոց ջարդերից հետո:

«Համակենտրոնացման ճամբարի զնդաններում մենք հասկանում էինք, որ բռնամիտ ոչ թե օտարն է, այլ անհանդուրժողականությունը, ռասիզմը, հակասեմականությունը, ատելությունն ուրիշի նկատմամբ», վերհիշել է Դյուկոլոնեն:

22 տարի անընդմեջ՝ 1964-88 թթ. ընտրվել է Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի՝ Ազգային ժողովի պատգամավոր Փարիզի հայաբաս Իսի-լը-Մուլինո արվարձանից, ոչ պակաս հայաբաս Վանվ, ինչպես նաեւ Մալակոֆ քաղաքներից, Դյուկոլոնեն առաջինն էր, որ 1965-ին, Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի ոգիով, համապատասխան հարցադրում էր արել Ֆրանսիայի կառավարությանը: Դառնալով Ազգ փոխնախագահ, նա շարունակեց իր հետեւողական գործունեությունը հանուն պատմական արդարության:

Ամեն տարի իր գործընկերների հետ նա նամակներով դիմում էր Ֆրանսիայի իշխանություններին, պահանջելով ճանաչել ու դատապարտել հայոց ցեղասպանությունը, առաջարկելով համապատասխան օրինագծեր: 1985-ին փոխխոսնակը գլխավորում է 1915-ի ողբերգության ճանաչման ֆրանսիական կոմիտեն, որի կազմում էին քաղաքական ու հասարակական գործիչներ, Դիմադրության շարժման մասնակիցներ: Մեծ էր նրա աշխատանքը Եվրոպական խորհրդարանի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման հայեցի բանաձեւի ընդունման ուղղությամբ (այդ առիթով տողերիս հեղինակին վիճակվել է բազմիցս հանդիպել նրա հետ Փարիզում աշխատած ժամանակ՝ 1987 թ.՝ հարցազրույցների, զրույցների առիթով):

Եվ բոլորովին պատահական չէ, որ երբ 2000 թ. Ֆրանսիայի խորհրդարանն ընդունում էր հայոց ցեղասպանությունը ճանաչող օրենքը, Ազգ նստավայր Բուրբոնյան պալատի կամարների տակ բազմիցս հիշատակվել է եղեռնը ճանաչելու համար անխոնջ մարտիկ Գի Դյուկոլոնեի անունը:

Դյուկոլոնեն Ֆրանսիայի չափազանց զարգացած ու ազդեցիկ տեղական ինքնակառավարման համակարգի երեւելի դեմքերից էր: 1953-88 թթ. ընտրվել է Փարիզը շրջապատող Սեն, այնուհետեւ՝ Օ-դը-Սեն դեպարտամենտի գլխավոր խորհրդի անդամ, երկար տարիներ մաս կազմել Իսի-լը-Մուլինոյի քաղաքային խորհրդի:

Դյուկոլոնեն եւ տիկինը ՖԿԿ 1970-90 թթ. քաղբյուրոյի անդամ Մայլեն Վենսանը (որը նա Դիմադրության շարժման մասնակից էր ու համակենտրոնացման ճամբարի նախկին գերի) մեծ հարգանք էին վայելում ֆրանսահայերի ամենալայն շրջանակներում, ամենաակտիվ մասնակցությունն են ունեցել հայերի տարաբնույթ ձեռնարկներին: Նա բազմիցս այցելել է խորհրդային Հայաստան, իրավամբ հիանալով մեր երկրորդ հանրապետության հաջողություններով՝ տնտեսության, գիտության ու մշակույթի բնագավառներում:

Անվանի գործչին այս օրերին հարգանքի տուրք են մատուցում ոչ միայն կուսակիցներն ու համախոհները, այլեւ քաղաքական հակառակորդները:

Դյուկոլոնեն վախճանվեց օգոստոսի 25-ին՝ նացիստներից Փարիզի ազատագրման շաս խորհրդանշական մի օր, ցավակցական ուղերձում գրում է Ֆրանսիայի մայրաքաղաքի քաղաքապետ Բերթրան Դելանոյեն: «ՖԿԿ դեկավար Դյուկոլոնեն անտրտունջ պայքարել է հանուն այն նույն արժեքների, որ նաեւ մղել էին զենք վերցնելու ընդդեմ նացիզմի», նշում է քաղաքագլուխը: «Համակենտրոնացման ճամբարը զգալով իր մաշկի վրա, նա ընդունում էր, որ պատմությունը երբեմ չպիտի կրկնվի», ասվում է ուղերձում: «Գի Դյուկոլոնեն կթողնի խիզախ, համոզմունքներ ունեցող մարդու հետք, մեզանից յուրաքանչյուրը նրանից կմտապահի նաեւ իր ջերմությունը», փաստեց Փարիզի քաղաքապետը:

ՖԿԿ ազգային քարտուղար Մարի-Ժորժ Բյուֆեն, իր հերթին, փաստում է, որ Դյուկոլոնեն միշտ եղել է մարդասեր, մարդկանց համար մաքրելի պատգամավոր, հարգված ու հիացնող: «Իր նվիրումին հավատարիմ, կյանքի սիրահար, Գին միշտ կարողանում էր մեզ հուսադրել», նշում է ՖԿԿ առաջնորդը:

Կրոնս հրամայականս, Պատվո լեգեոնի ու Արժանաց ազգային շքանշանների սոպա Դյուկոլոնեն մինչեւ իր կյանքի վերջը եռանդով աշխատակցել է ՖԿԿ «Յումանիտե» պատասխանատուին, բազմիցս անդրադառնալով հայոց ցեղասպանությանը:

ՏԵՂԵՐԻ ԹԻԼՈՅԵՆ

Հայաստանի պարի պեսական անսամբլ

Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պարի պետական անսամբլը կեսդարյա պատմություն ունի: Անսամբլին մասնակցել են հաջողություններ 50-ից ավելի երկրներում, որտեղ նրանք իրենց պրոֆեսիոնալի համբավը հաստատել են անկրկնելի ելույթներով: Երեկ անսամբլի փորձին ներկա գտնվեցին լրագրողները ու դարձան անդրանիկ դիտողը ՀՀ վաստակավոր արտիստ Ռուդոլֆ Խաչատյանի բեմադրած «Հայաստան» պարի, որի պրեմիերան կլինի 2009-ի մարտին՝ անսամբլի հոբելյանի պատվոնական նշման օրը: Անսամբլի տնօրեն Էրիկ Չանչուրյանի հրավերով Ռ. Խաչատյանն աշխատել է անսամբլի հետ ու բեմադրել երկու նոր պար հատուկ հոբելյանական համերգաշարերի համար: Ի դեպ, այդ նոր ծրագիրը բաղկացած է լինելու երեք տարբեր մասերից ու ընդգրկելու է հեթանոսական, քրիստոնեական շրջանները ու մեր օրերը: 1 ժամ 30 րոպե տևողությամբ համերգային ծրագրի համար անսամբլի երաժշտական ղեկավար կոմպոզիտոր Հայկ Գրիգորյանը գրել է երաժշտությունը, որի հիմքի վրա, ռեժիսոր Հարությունն Ազարյանի սցենարով բեմադրում են նոր պարեր անսամբլի գլխավոր բալետմայստեր Անահտ Կարապետյանը, պարի լեգենդ Վանուհ Խանամիրյանը եւ արդեն, ինչպես նշել էինք, ԱՄՆ-ից հրավիրված Ռուդոլֆ Խաչատյանը: Ասենք, որ ըստ սցենարի, պարերի միջեւ չի լինելու ընդմիջում, այլ առանց դադարի, իրար շաղկապված մեկ գծով, ժամանակաշրջանները ներկայացնող մի շահանդես է ներկայացվելու 300 զույգ նոր կարված շեղ զգեստներով (նկարչուհի Գայանե Սարիբեկյան) ու նոր մատուցման ձեւով: Համերգային ծրագրի 80 տոկոսը պրեմիերա, իսկ մնացյալը անսամբլի 50 տարիների ընթացքում եղած լավագույն պարերն են լինելու: Մեր օրերի բալետային խմբի լավագույն պարող ու պարուսույց Ռուդոլֆ Խաչատյանը երկու տասնամյակ է, ինչ ապրում է Վաշինգտոնում եւ ղեկավարում է «Սիթի դանս» եւ «Աստա» ժամանակակից բալետային խմբերը, որոնք մեծ ճանաչում ունեն ամբողջ աշխարհում: Նրա խմբի ելույթներին անձամբ ներկա է եղել ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը ու 3 անգամ Սոֆիական տանը հատուկ ընդունել է Ռուդոլֆ Խաչատյանին: «Ազգի» այն հարցին, թե ինչպե՞ս ընդունեցիք պարի պետականի հրավերը, ասաց. «Միանգամայն, չնայած բոլոր դժվարություններին: Գարնանը, Երեւանում բալետի բեմադրության առիթով եկել էի, հանդիպեցինք ու Էրիկ Չանչուրյանի հետ եկանք համաձայնության նոր գործ, նոր ծրագիր անելու: Ասեմ, որ ինձ շատ է ուրախացնում հագուստների, երաժշտության ու նաեւ ժամանակաշրջանները ճիշտ ներկայացնելու հետ կապված մանրակրկիտ աշխատանքը: Փորձ է արվում մեր ամբողջ պատմությունը ընդգրկելու պարի շարժումների մեջ, ես էլ եկել եմ լրացնելու մի հատվածը այդ շարից»:

Հոբելյանական համերգաշարով անսամբլը հանդես կգա 3 համերգով Երեւանում, այնուհետեւ Անգլիայում, Գերմանիայում, Թուրքիայում, Արաբական Էմիրություններում, Սիրիայում եւ այլ երկրներում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

«Մարգարեի» տիեզերական ուժը

Համաշխարհային գրականության մեջ կան բազմաթիվ ստեղծագործողներ, ովքեր հիասթափվելով իրական կյանքի անարդարություններից ու ածնե խալափոխի հանդիպող անբարոյականություններից, մարդու փրկության ելքը նրներկայացրել են հավատի մեջ: Այդպիսի ստեղծագործողներից է լիբանանյան պոեզիայի ամենահայտնի դեմքերից Ժբրան Խալիլ Ժբրանը:

Նոր ժամանակաշրջանի ասպվածաունչ, այսպես են բազմաթիվ գրականագետներ ներկայացնում Ժբրանի «Մարգարեն» պոեմը: Կյանքի ընթացքում Ժբրանը սիրում ու անընդհատ ընթերցում էր Աստվածաունչը, հատկապես Ավետարանները, որոնց առակները նախատիպեր են արել բազմաթիվ ստեղծագործությունների համար: Իրեն համարում էր «Աստվածաշնչյան բանաստեղծ» եւ հավատում էր մարդկային հոգու անմահությանն ու տիեզերական սիրուն:

«Մարգարեն» պոեմը գրվել է տարիների ընթացքում: Գրի ստեղծման գաղափարի մասին իր գրառումներում Ժբրանն ակնարկում էր դեռեւս 1915-1916 թթ:

Ի սկզբանե ծրագրված էր, որ գիրքը պետք է լինի եռահատոր: Առաջին մասում՝ «Մարգարեն», Ժբրանն անդրադառնալու էր մարդ-մարդ հարաբերությանը, երկրորդում՝ ներկայացնելու էր մարդ-բնություն կապն, իսկ երրորդ մասում խոսելու էր մարդ-աստված առնչության մասին: Սակայն շուտով բանաստեղծը հրաժարվում է նախնական ծրագիրից: Բազմաթիվ գրականագետներ նշում են, որ Ժբրանը հրաժարվեց իր մատյաններից «Մարգարեի» հրատարակությունից հետո (1923թ. Նյու Յորք): Լույս ընծայումից հետո գրքի մասին նյույորքյան մամուլում ընդամենը մի քանի գրախոսական գրվեց ու հատուկ ուշադրության չարժանացավ: Շատերը «Մարգարեի» ծնունդը որակեցին աննշան ու անհետեւանք իրադարձություն: Թերեւս դա էլ հիասթափեցրեց բանաստեղծին: Միակ մարդը, որ հավատում էր գրքի հաջողությանը Մերի Հասկելն էր՝ Ժբրանի հովանավորն ու համախոհը: Նա անդադար կրկնում էր, թե «Գիրքը կդառնա անգլալեզու գրականության գանձերից մեկը: Այն անմահ է բոլոր սերունդների համար եւ ընթերցողների հատուկ նալուն զուգահեռ ավելի ու ավելի մեծ սեր կվայելի»: Տարիներ անց Հեսկելի կանխատեսումներն իրականացան: «Մարգարեն» թարգմանվել է աշխարհի տասնյակ լեզուներով, վաճառվել է գրքի ավելի քան մեկ միլիոն օրինակ եւ ընդգրկված է աշխարհի ամենից շատ ընթերցվող գրքերի ցուցակում:

Գրքի սկզբում իր ախոռավայր կղզուց մարգարեն դուրս է գալիս եւ այդ ընթացքում իր իմաստուն խորհուրդներն է տալիս ունկնդիրներին: Նկատի ունենալով Ժբրանի վաղ շրջանի արաբերեն ստեղծագործություններն ու լիբանանյան հասարակության խիստ ենթադասությունները եւ Ժբրանի հարկադրված հեռացումը Լիբանանից՝ գրքում երբեմն զուգահեռներ են տարվել հեղինակի եւ հերոսի միջեւ: Ժբրանը բազմիցս շեշտել է, որ մարգարեն ինքը չէ, սակայն ճշմարտությունը պետք է փնտրել այլ դիրքորոշման մեջ: Ժբրանի պոեզիայի երկրպագուներն ու գիտակները նշում են, թե մարգարեի՝ Ալմուսթաֆայի կերպարում միաձուլված են բանաստեղծի մետաֆիզիկական հայրենիքի իդեալը, նրա կարոտախտն ու հայրենաբաղձությունը:

Երեւանում անցկացվող լիբանանական մշակույթի շաբաթվա ընթացքում, երեկ Գողենների միությունում տեղի ունեցավ Ժբրան Խալիլ Ժբրանին նվիրված հուշ ցերեկույթ եւ «Մարգարե» գրքի արեւելահայերեն թարգմանության շնորհանդեսը:

«Առանձնահատուկ ստեղծագործություն է, թե՛ մարդու փիլիսոփայության, թե՛ մարդ-բնության ու տիեզերք կապի առումով: Դեռեւս անցյալ դարի կեսերին պոեմը թարգմանվել է արեւմտահայերեն: Անցյալ տարի էլ լիբանանի դեսպանատան նախաձեռնությամբ ու աջակցությամբ «Մարգարեն» փոխադրվեց արեւելահայերեն, ինչի շնորհիվ մեր թարգմանչական գրականությունը հարստացավ եւս մեկ հրաշալի գործով», գրքի շնորհանդեսի ժամանակ ասաց ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը:

«Ժողովրդին հաղորդացնում է հավատն ու մշակույթը: Այս երկու չափորոշիչները հատուկ են հայ ժողովրդի էությանը: Դրա ունենք մեր լեզուն, մշակույթը, ազգային պարն ու երաժշտությունը եւ առանձնանում ենք, որպես բազմադարյան մշակույթ կրող ազգ: Հրաշալի զգացողություն է, որպեսզի մեր երկու բարեկամ ազգերի դարավոր կապն ավելի ամրանա», միջոցառման ընթացքում ներկաներին ողջունեց Հայաստանում լիբանանի դեսպան Ցիրաքի Ցիարան:

Լեւոն Անանյանը նաեւ հավելեց, թե մոտ ապագայում ՀԳՄ-ն կազմակերպելու է բազմաթիվ միջոցառումներ՝ հայ ընթերցողներին լիբանանյան գրականության լավագույն գործերին ծանոթացնելու նպատակով: Մինչեւ տարվա վերջ լույս կտեսնի լիբանանյան գրականության յոթ նշանավոր բանաստեղծների անթոլոգիան, իսկ հաջորդ տարի կհրատարակվի ավելի քան քառասունհինգ անուն ժամանակակից լիբանանյան բանաստեղծների ներարգական հավաքածուն:

«Երկու տարի առաջ Երեւանում բացվեց Ժբրան Խալիլ Ժբրանի արձանը: Նախատեսված է, որ շուտով Բեյրութում բացվելու է հայ մեծ քանդակագործ Ավետիք Իսահակյանի արձանը: Սա նույնպես բարեկամության եւ մշակութային երկխոսության գեղեցիկ դրսեւորում է: 2009-ին նախատեսել ենք Հայաստանում անցկացնել լիբանանյան գրականության օրեր: Լիբանանյան մշակույթի հետ բանակցություններ ենք վարում, որպեսզի մեր գրողների խմբերն այցելեն, հանդիպումներ կազմակերպեն լիբանանցի ընթերցողների հետ: 2010 թ. էլ Բեյրութում կկազմակերպենք ժամանակակից հայ ներարգության փառատոն», եզրափակեց Լեւոն Անանյանը:

ՏԻԳՐԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ հավաքականը սկսում է նախապատրաստությունը

Մարկոսն առնվազն երեք տարի հավաքականում չի խաղա

Սեպտեմբերի 6-ին Թուրքիայի հավաքականի հետ հանդիպումով Հայաստանի ազգային հավաքականը կսկսի ֆուտբոլի աշխարհի 2010-ի առաջնության ընտրական մրցաշարը: Չորս օր անց մեր ընտրանին կհյուրընկալվի Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի հավաքականին: Պատասխանատու այդ հանդիպումների նախապատրաստությունը ՀՖ հավաքականը կսկսի սեպտեմբերի 1-ից՝ ուսումնամարզական հավաք անցկացնելով Երևանում: Այդ հանդիպումներին նախապատրաստվելու նպատակով ՀՖ հավաքականի գլխավոր մարզիչ Յան Պոուլսենն ուսումնամարզական հավաք է հրավիրել 25 ֆուտբոլիստի: Նրանցից 16-ը լեգեոնականներ են, 5-ը ներկայացնում են «Փյունիկը», 2-ական ֆուտբոլիստ էլ հրավիրվել են «Արարատից» ու «Բանանցից»: Վնասվածքի պատճառով բացակայում է «Արարատի» ավագ Արթուր Մինասյանը, որը հուլիսի 31-ին Շվեյցարիայում տեղի «Բելինցոնայի» հետ ՈԵՖԱ-ի գավաթի խաղարկության պատասխան խաղում վնասել էր ոտը: Հրավիրված ֆուտբոլիստների թվում չէ նաև «Արարատի» բրազիլացի հարձակվող, առաջնության լավագույն ռմբարկու Մարկոսը, ոն այս տարվա մայիսին Մոլդովայի հավաքականի հետ ընկերական խաղում նորամուսը մեր ընտրանում նշել էր գոլով: Նրա բացակայության պատճառն այլ է: Բանն այն է, որ վերջերս ՖԻՖԱ-ն նոր որոշում է կայացրել, ըստ որի ֆուտբոլիստին թույլատրվում է այլ երկրի ազգային հավաքականում հանդես գալ միայն հինգ տարի այդ երկրում բնակվելու դեպքում: Նախկինում գործող կարգի համաձայն այդ թույլտվությունը տրվում էր 2 տարի բնակվելու դեպքում: Ինչ խոսք, շատ ցավալի է, որ Մարկոսն առնվազն երեք տարի չի կարողանա հանդես գալ ՀՖ հավաքականում, որը գոլային պահերն օգտագործող, ռմբարկուի հատկանիշներ ունեցող ֆուտբոլիստների կարիք է զգում:

Ներկայացնում ենք ուսումնամարզական հավաքի հրավիրված ֆուտբոլիստների ցանկը:

Դարպասպահներ՝ Ռոման Բերեզովսկի («Խիմկի», Ռուսաստան), Գետորգ Կասպարով («Ուլիս»), Գրիգոր Մելիքսեթյան («Փյունիկ»):

Պաշտպաններ՝ Սարգիս Հովսեփյան («Փյունիկ»), Որբերտ Արզումանյան («Ռանդերս», Դանիա), Կարեն Դոխոյան («Փյունիկ»), Ալեքսանդր Թադևոսյան («Վիտեբսկ», Բելառուս), Արվան Մկրտչյան («Գոմել», Բելառուս), Հրայր Մկոյան («Արարատ»), Հովհաննես Գրիգորյան («Բանանց»), Վահագն Մինասյան («Արարատ»):

Կիսապաշտպաններ՝ Արարատ Առաքելյան («Մետալուրգ», Ուկրաինա), Լևոն Փայջյան (ԳԱԻՍ, Հվեդիա), Արթուր Ոսկանյան («Վիտեբսկ», Բելառուս), Ռոմիկ Խաչատրյան («Բանանց»), Արտավազդ Քարամյան («Տիմիշոարա», Ռումինիա), Կարեն Ալեքսանյան («Տորպեդո», Ժողովրդական Բելառուս), Արթուր Եդիգարյան («Փյունիկ»), Համլետ Մխիթարյան («Ռահահան», Իրան):

Հարձակվողներ՝ Էդգար Մանուչարյան («Այախ», Հոլանդիա), Գետորգ Ղազարյան («Փյունիկ»), Սամվել Մելոնյան («Մետալուրգ», Ուկրաինա), Արա Հակոբյան («Գոմել», Բելառուս), Արման Քարամյան («Տիմիշոարա», Ռումինիա), Որբերտ Զեբելյան («Բալթիկա», Ռուսաստան):

Թուրքիայի հավաքականի հետ «Հրազդան» մարզադաշտում կայանալիք ընտրական հանդիպումը ահռելի հետաքրքրություն է առաջացրել ոչ միայն հայաստանցի ֆուտբոլասերների շրջանում: Ըստ որոշ տեղեկությունների, սպասվում է ֆուտբոլասերների մեծ հոսք Թուրքիայից, թեև առայժմ պաշտոնական տվյալներ չկան թուրք երկրպագուների թվականակի մասին: Խաղը Երևանում դիտելու ցանկություն են հայտնել նաև արտերկրի մեր շատ հայրենակիցներ: Բնականաբար, ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիան միջոցներ է ձեռնարկել թուրք ֆուտբոլասերներին տոմսերով ապահովելու համար՝ նրանց հաստկացնելով տրիբունայի առանձին հատվածներ: Նախորդ հանդիպումների համեմատ, այս անգամ «Հրազդանի» մուտի տոմսերի գինը բավական բարձր է՝ 3, 5, 7 եւ 10 հազար դրամ: Դրանց մեծ մասն արդեն սպառվել է եւ տոմսակղեռում հիմնականում մնացել են 10 հազար դրամանոց տոմսեր:

Կասկածից վեր է, որ «Հրազդան» մարզադաշտը սեպտեմբերի 6-ին լեփ-լեցուն է լինելու: Թուրքերի նկատմամբ մեր երիտասարդական հավաքականի վերջերս տոնած հաղթանակն ավելի է ոգեւորել թե՛ մարզասերներին, թե՛ ֆուտբոլիստներին: Թեեւ Թուրքիայի հավաքականը բավական լավ տրամադրություն թողեց Եվրոպայի առաջնությունում՝ արժանանալով բոնզե մեդալների, սակայն դա չի խանգարում մեր ֆուտբոլասերներին լինել լավատես ու հայ ֆուտբոլիստներից հաղթանակ ակնկալել:

Բավական երկարատեւ ընդմիջումից հետո ՀՖ հավաքականը կրկին հանդես է գալու «Հրազդանում», որտեղ մեր ընտրանին 1992-ի հոկտեմբերի 14-ին իր անդրանիկ խաղն էր անցկացրել մոլդովացիների հետ (0-0): Հենց «Հրազդանում» են մեր ֆուտբոլիստները բացել հավաքականի գոլերի հաշիվը: 1994-ի հուլիսի 16-ին անդրանիկ գոլի հեղինակ է դարձել Արսեն Ավետիսյանը՝ գրավելով Մալթայի հավաքականի դարպասը: Այս մարզադաշտում են մեր ֆուտբոլիստները նորամուսը նշել աշխարհի առաջնությունների ընտրական մրցաշարերում՝ 1996-ի օգոստոսի 31-ին ոչ-ոի (0-0) խաղալով Պորտուգալիայի ընտրանու հետ: Վերջին հանդիպումը «Հրազդանում» մեր հավաքականն անցկացրել է 2000-ի ապրիլի 26-ին Վրաստանի ընտրանու դեմ: Ընկերական այդ խաղում դարպասները մնացին անառիկ: Դրանից հետո Հայաստանի հավաքականի գլխավոր մրցաստարեզը դարձավ վերակառուցված «Հանրապետական» մարզադաշտը: Եվ ահա 8 տարի անց «Հրազդանը» կրկին իր հյուրընկալ դռներն է բացում Հայաստանի ազգային հավաքականի առջեւ: Թող որ վերադարձը հարազատ մարզադաշտ պսակվի հաջողությամբ:

Նախկին բռնցքամարտիկին դանակահարել են

Վիեննայում, անձնական սրճարանի մոտակայքում գտնվել է սերբ նախկին բռնցքամարտիկ, միջին քաշում աշխարհի նախկին չեմպիոն Էդիդ Սեկուլիչի դիակը: Ականատեսների հավաստմամբ, 50-ամյա Սեկուլիչը սկզբում ծեծի է ենթարկվել երկու անծանոթ տղամարդկանց կողմից, որից հետո դանակահարվել է: Ոստիկանությանը հաջողվել է ձերբակալել հանցագործներից մեկին, ինչպես նաեւ գտնվել է սպանությանը մասնակից դանակը:

Սերբ նախկին բռնցքամարտիկը Ավստրիա էր տեղափոխվել 1980-ականների սկզբներին: 1988-ին նա միջազգային ասպետիկական ընկերակցության վարկանիշ աշխարհի չեմպիոնի տիտղոսին էր արժանացել մինչեւ 70 կգ քաշային կարգում՝ հաղթելով ամերիկացի Բրայան Գրանտին: Մեկ տարի անց նա դարձել էր Եվրոպայի չեմպիոն բռնցքամարտի եվրոպական միության վարկանիշ: 2002-ին Սեկուլիչն ավարտել էր մարզական կարիերան եւ զբաղվել բիզնեսով: Վիեննայում նա սրճարան էր բացել:

Պաուելը կրկին վազքուղյակ դուրս կգա

Ճամայկացի աստղավազորդ Ասաֆա Պաուելը, որին չհաջողվեց Պեկինում մեդալ նվաճել, կրկին հանդես կգա իտալական Ռիետիում սեպտեմբերի 7-ին անցկացվելիք Գրան պրիի մրցումներում: Անցած տարի նա այդտեղ աշխարհի ռեկորդ էր սահմանել (9,74 վրկ) 100 մ վազքում: Պաուելի ռեկորդը երկու անգամ գերազանցել է նրա հայրենակից, օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Ուսեյն Բոլտը: Վերջինս Նյու Յորքում ցույց էր տվել 9,72 վրկ արդյունք, իսկ Պեկինում մրցաստարածությունը հաղթահարել էր 9,69 վրկ-ում:

Նաֆայել Վահանյանը պարտվեց առաջատարին

Անտվերպենի շախմատի մրցաշարի 6-րդ տուրում Վահանյանը սեւերով պարտվեց առաջատարներից մեկին՝ չին շախմատիստ Բու Քսյանջիին: Հայ գրոսմայստերը 6 հնարավորից վաստակել է 2,5 միավոր եւ զբաղեցնում է 7-րդ տեղը: Իսկ Քսյանջին ուկրաինացի Միրոնիչենկոյի հետ 5 միավորով գլխավորում է աղյուսակը: Վերջինս եւս հաղթանակ տոնեց՝ առավելության հասնելով վան դեր Ստրիխտի նկատմամբ:

4-ական միավորով հաջորդ տեղերում են Թիմանն ու Քիմտերին: Թիմանը հաջողություն կնվեց Շեբլերի հետ, իսկ Քիմտերին հաղթեց Միխելսենին: Ոչ-ոի արդյունք գրանցվեց նաեւ Վեղլե-Լահնո մրցավեճում:

Վարուժան Հակոբյանն առաջատարների թվում է

Մոնրեալում ընթացող շախմատի ավանդական 9-րդ մրցաշարում հաջող է հանդես գալիս ԱՄՆ-ում բնակվող Վարուժան Հակոբյանը: 5 տուրից հետո նա 3,5 միավորով 2-3-րդ տեղերն է բաժանում կանադացի Շարբոնոյի հետ: Առաջատարը ԱՄՆ-ն ներկայացնող Յուրի Շուլմանն է՝ 4 միավոր:

2-րդ տուրում Հակոբյանը սեւերով իր անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով ճապոնացի Հիկարու Նակամուրային: Այնուհետեւ նա հաղթեց Մարկ Բլյուվշտեյնին ու Անտոն Կովալյովին, ապա ոչ-ոի ավարտեց պարտիան Սեբաստիան Մազի հետ:

5-րդ տուրում Շուլմանը հաղթեց Իգոր Նատաֆին, Իգոր Զուգիչն էլ պարտության մատնեց Հիկարու Նակամուրային: Մնացած պարտիաներն ավարտվեցին ոչ-ոի:

Խմբերի կազմը հայտնի է

Մոնակոյում կայացած վիճակահանությունը որոշել է չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի խմբերի կազմը: 32 ուժեղագույն թիմերը բաժանվել են 8 խմբի: Ահա խմբերի կազմերը:

«A» խումբ. «Չելսի», «Ռոմա», «Բորդո», ՉՖՈ:

«B» խումբ. «Ինտեր», «Վերդեր», «Պանաթինայկոս», «Անորտոսիս»:

«C» խումբ. «Բարսելոնա», «Սպորտինգ», «Բազել», «Շախտյոր»:

«D» խումբ. «Լիվերպուլ», «Էյնհովեն», «Մարսել», «Սլեֆիկո»:

«E» խումբ. «Մանչեսթր Յունայթեդ», «Վիլլառեալ», «Սելթիկ», «Օլբորգ»:

«F» խումբ. «Լիոն», «Բավարիա», «Սլավիա», «Ֆիորենտինա»:

«G» խումբ. «Արսենալ», «Պորտո», «Ֆեներբահչե», «Դինամո» (Կիեւ):

«H» խումբ. «Ռեալ», «Յուվենտուս», «Զենիթ», ԲԱՏԷ:

Առաջին տուրի հանդիպումները կկայանան սեպտեմբերի 16-ին եւ 17-ին:

Մոնակոյում կայացած վիճակահանության ժամանակ տեղի է ունեցել նաեւ չեմպիոնների լիգայի նախորդ խաղարկության լավագույն ֆուտբոլիստների պարգեւատրման արարողությունը: Լավագույն ֆուտբոլիստի եւ հարձակվողի մրցանակը հանձնվել է «Մանչեսթր Յունայթեդի» խաղացող Քրիստիանու Ռոնալդուին: Մյուս անվանակարգերում լավագույնն են ճանաչվել «Չելսի» դարպասապահ Պետեր Չեխը, պաշտպան Ջոն Թերին եւ կիսապաշտպան Ֆրենկ Լեմփարդը:

Մրցանակը սպասում է 6-րդ դափնեկրին

Սեպտեմբերի 1-ին Մոնտե Կարլոյում տեղի կունենա «Ոսկե ոտ» մրցանակի 6-րդ մրցանակաբաշխությունը: Հիշեցնենք, որ Մոնակոյի արքայազնի հովանավորությամբ անցկացվող մրցանակաբաշխությամբ կորոշվի 29-ից բարձր տարիք ունեցող այն գործող ֆուտբոլիստը, որն իր ոտնաթաթի հետքը կթողնի Մոնտե Կարլոյում ստեղծված ֆուտբոլային «ասպետի» ծառուղում: Մրցանակի տերը որոշվում է www.goldenfoot.com կայքում կատարվող քվեարկության միջոցով:

Ժյուրիի որոշմամբ յուրաքանչյուր տարի ընտրվում են ֆուտբոլային հարուստ կենսագրություն ունեցող, 29-ից բարձր տարիքի 10 ֆուտբոլիստներ, որոնցից էլ քվեարկության միջոցով ընտրվում է լավագույնը: Այս տարի լավագույն տասնյակում ընդգրկվել են Որբերտ Կարլոսը, Դեյվիդ Բեքհեմը, Ռայան Գիգզը, Ֆաբիո Կանավարոն, Թյերի Անրին, Լուիս Ֆիգուն, Ռաուլը, Դավիթ Տրեզեգեն, Ջանլուիջի Բուֆոնն ու Ֆրանչեսկո Տոտին:

«Ոսկե ոտ» մրցանակի առաջին դափնեկիրն հայտնի հանրահայտ ֆուտբոլիստ Որբերտ Բաջիոն էր: 2003-ին նա իր ոտնաթաթի հետքը թողեց ֆուտբոլային «ասպետի» նորաստեղծ ծառուղում: Հաջորդ տարիներին նման պատվի արժանացան Պավել Նեդվեդը, Անդրեյ Շեւչենկոն, Ռոնալդոն եւ Ալեսանդրո դել Պիերոն: Նշենք նաեւ, որ բացի գործող ֆուտբոլիստներից, յուրաքանչյուր տարի ժյուրին ընտրում է նախկին մի քանի ֆուտբոլիստների, որոնք եւս արժանանում են գնահատանքի: Այս անգամ ֆուտբոլային նախկին «ասպետներից» ընտրվել են Զինեդին Զիդանը, Ռոժե Միլան, Լուիս Սուարեսը եւ 1986-ի «Ոսկե գնդակի» դափնեկիր Իգոր Բելանովը:

Կական ու Ռոբինյոն Աբրամովիչի ուշադրության կենտրոնում

«Չելսիի» սեփականատեր Ռոման Աբրամովիչը գոհարներ չի խնայում ուժեղացնելու թիմի կազմը: Նա պատրաստ է 101 մլն եվրո վճարել «Միլանի» բրազիլացի ֆուտբոլիստ Կական տեղափոխման դիմաց: Ըստ Աբրամովիչի, Անդրեյ Շեւչենկոյի վերադարձը «Միլան» երկու ակումբների միջեւ հարաբերությունների բարելավմանը կնպաստի եւ կմեծացնի Կական «Չելսի» տեղափոխվելու հնարավորությունը: Եթե չհաջողվի Կականին այժմ թիմ հրավիրել, Աբրամովիչը պատրաստ է այդ հարցին անդրադառնալ հունվարին: Նախատեսվում է, որ «Չելսիում» Կական տարաբնույթ աշխատավարձը կկազմի 250 հազար եվրո:

Աբրամովիչը կողմնորոշվել է նաեւ Մադրիդի «Ռեալի» բրազիլացի հարձակվող Ռոբինյոյի հարցում: Նա պատրաստ է 37 մլն եվրո վճարել Ռոբինյոյի տրանսֆերի համար: Նա գտնում է, որ այդ գումարը բավական մեծ թիվ է այսօրվա տրանսֆերային շուկայում: Ժամանակին Ռոբինյոյին գնելը հաջող գործարք էր «Ռեալի» համար: Եվ եթե իրականան ակնկալները նրան հաջորդ տարի վաճառի, հնարավոր է ֆուտբոլիստի տրանսֆերային արժեքը ցածր լինի:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Համակարգիչների կարիք ունեն հասկանալ Երևանի, Վայոց ձորի եւ Արմավիրի դպրոցները

Հանրակրթության ոլորտում 2004-ից իրականացվող տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման ծրագրում հանրապետության 1467 դպրոցներից առայժմ ընդգրկված չեն 411-ը: Մասնակցության այդ տիպի բարձր տոկոս է գրանցվել այն պարզ պատճառով, որ բոլոր դպրոցները հնարավորություն են ստացել համակարգիչներ ձեռք բերելու արտոնյալ պայմաններով, վճարելով գումարի ընդամենը 30 տոկոսը, այն էլ՝ մեկ տարվա ընթացքում, 3 փուլով: «Համակարգիչները ձեռք են բերվում միջազգային մրցույթով, որին մասնակցող ընկերությունները դրամի առաջարկում են բարձր որակով եւ ցածր գնով, ֆանի որ հենց իրենք են վճարում գումարի մի մասը: Այժմ ընթացի մեջ է ծրագրի 4-րդ փուլը եւ սեպտեմբեր-հոկտեմբերին համակարգիչները կհասնեն Երեւանի եւ մարզերի դպրոցներ: Միջնակարգ դպրոցներից բացի ծրագրին մասնակցում են նաեւ մասնավոր եւ հասուկ դպրոցներ, արհեստագործական ուսումնարաններ: Ֆինանսական սուղ վիճակում գտնվող դպրոցներն ամեն տարի սահմանում են նվիրատվություններ: Այդ դպրոցների ցանկը կազմվում է նախարարի հրամանով՝ մարզային կրթության վարչությունների հաղորդած տվյալների հիման վրա: Այս տարի նվիրատվություն կստանա 53 դպրոց, իսկ ընդհանուր առմամբ, ծրագրի ընթացքում դրանց թիվը հասել է 200-ի: Առաջիկայում նախատեսում ենք պայմանագիր կնքել մոտ 150 դպրոցների հետ, որոնք համակարգչային սարքավորումներ կստանան մյուս տարի՝ ծրագրի վերջին փուլում», ասում է ՏՊՏ բաղադրիչի մասնագետ Ժաննա Անդրեասյանը:

Դպրոցների համակարգչայնացումն իրականացվում է «Կրթության որակ եւ համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում ստեղծված համակարգիչների շրջանառու համակարգի միջոցով: Տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման բաղադրիչի ղեկավար Նուբե Ոսկանյանը չափազանց կարեւոր է համարում, որ համակարգչայնացումը դպրոցներում կստեղծվեն ոչ սուս կենտրոններ, այսինքն՝ համակարգչային գիտելիքները կօգտագործվեն տարբեր առարկաների դասավանդման ժամանակ, լրացուցիչ նյութեր ձեռք կբերվեն ինտերնետից: «Անշուշտ, համակարգիչների քանակը դպրոցներում նույնը չէ, որոշիչ դեր ունեն դպրոցի տեղը, աշակերտների քանակը, նյութական միջոցները: Ուրախալի է, որ համակարգչային սարքավորումների թիվը տարեցտարի ավելանում է, եւ հասնում ենք այն նպատակակետին, որ համակարգիչը դասապրոցեսում գործածվում է որպես ուսուցման գործիք», ասում է նա, տեղեկացնելով, որ ամերիկյան կառավարության աջակցությամբ իրականացվող «Փրոցեկտ հարմոնի» ծրագրով ստեղծված համադպրոցական ցանցի մեջ ներգրավված 330 դպրոցին տուսով կմիանա եւս 320 դպրոց՝ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի վարկային ծրագրի շնորհիվ: Հետագայում դրանց թիվը կավելանա եւ համադպրոցական ցանցում կներգրավվեն հանրապետության բոլոր դպրոցները: Էլեկտրոնային կրթության միջավայր ստեղծելու նպատակով արդեն գործում է www.edu.am կայքէջը՝ լրացվող ուսումնական նյութերով, ֆորումներով:

Հատուկ ուշադրություն է հատկացվում համակարգչային ուսումնական ծրագրերի մշակմանը. արդեն դպրոցներ է ուղարկվել հայոց լեզվի դասավանդման համակարգչային ծրագիրը՝ 7-9-րդ դասարանների համար, մշակման փուլում է հանրահաշիվ եւ երկրաչափություն առարկաների ծրագիրը, մրցույթ է հայտարարվել օտար լեզուների ծրագրերի մշակման համար: Այս փուլում այլ ծրագրեր չեն մշակվի, մյուս առարկաների դասավանդման համար կօգտագործվեն «Բաց հասարակության» ինստիտուտի օժանդակությամբ ստեղծված քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա առարկաների ծրագրերը, որ դպրոցներին անվճար տրամադրում է կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը:

Համակարգչային ուսումնական ծրագրեր ստեղծելով, փորձ է արվում դասաժամերը աշակերտների համար գրավիչ դարձնել խաղի միջոցով: Առանձին քննության նյութ է, թե այդ ծրագրերն ինչ ներգործություն կունենան կրթության որակի վրա, իմացության ինչ մակարդակ կապահովեն: Առայժմ գոհացուցիչ է, որ ստեղծվել է վերահսկող աշխատանքային խումբ, կատարվել է ուսումնասիրություն, որի արդյունքներն ուսանելի կլինեն ծրագրի հետագա փուլերի համար: Տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործման կարեւորությունը, ըստ նշյալ արդյունքների, գիտակցում են բոլորը՝ թե ուսուցիչները, թե աշակերտները, ոչարապես դպրոցների մոտ 90 տոկոսը կարիք ունի լրացուցիչ համակարգչային սարքավորումների, 50 տոկոսը՝ սարքավորումները տեղադրելու լրացուցիչ տարածքի, իսկ 74 տոկոսը՝ օժանդակ միջոցների: Հարցված ուսուցիչների 42 տոկոսը համակարգչային ուսումնական ծրագրերի արդյունավետությունը համարել է ոչ այնքան գոհացուցիչ: Տեղեկատվական տեխնոլոգիաները դեռ չեն դարձել ուսումնամեթոդական կարեւոր բաղադրիչ, այլ դիտվում են որպես լրացուցիչ միջոցներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ծրագրում մասնակցության ցածր տոկոս ունեն հասկանալի սոցիալական դպրոցներ կան, որոնք ընդհանրապես համակարգիչ չունեն կամ շատ քիչ ունեն: Ծրագրի առաջին 4 փուլերը կավարտվեն եկող տարի, իսկ հետագա նախագծերը կորոշվեն այս տարվա աշնանը՝ հանրապետության բանկի ներկայացուցիչների այցից հետո», հավելում է Նուբե Ոսկանյանը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Eurasia Partnership Foundation seeks:

1. Consultant (s) to conduct an evaluation of EPF programs on organizational development and community support. The consultant(s) should evaluate 2 EPF programs, identify models contributing to NGO sustainability, identify positive community change models, and provide recommendations as to how these models can be integrated into EPF's and others' work.

Eligibility: Organizations, individuals or groups of individuals are eligible. The core team of the consultants should have competence in: a. conducting field research in the sphere of social sciences; and b. program evaluations in the field of NGO organizational development. The consultant (s) should be fluent in Armenian and English and should submit the final report in both English and Armenian.

Application Procedures: A detailed Scope of Work describing the evaluation's goal and objectives, selection criteria and application instructions can be obtained from EPF at 56 Zarobyan Street in Yerevan or downloaded from the Foundation's web-site at the . The deadline for submission of proposals is **September 15, 2008 at 5:00 p.m Yerevan time.**

2. Administrative Assistant (full time).

Qualifications: Candidates should have a university degree, preferably in Linguistics, Social Sciences, Journalism, Business Administration, or a related field; be familiar with office equipment; have strong oral and written skills in Armenian, English and Russian; knowledge of Turkish and/or Farsi is highly desirable; be detail-oriented; have strong communication skills; and have the ability to work as a part of a team and meet deadlines. Previous work experience is highly desirable.

Application Procedures: Applicants should submit a cover letter and CV referencing Administrative Assistant to EPF's Human Resource Manager at 56 Zarobyan Street in Yerevan or by e-mail to . For more information please visit EPF web site: . Application deadline is **Monday, September 8, 2008 at 5:00 p.m.**

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ քաղաքացիների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ լրացուցիչ տեղեկություն եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների հանձնաժողովի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագարդ գյուղում գտնվող «Անվանակոչ» ՍՊԸ-ի ձկնաբուծության (խեցգետնաբուծարանում) նոր ստորգետնյա լրացուցիչ ջրաղբյուրի 2.0 լիտր/վրկ լրացուցիչ ջրառի նպատակով:

Բոլոր շահագրգիռ անձիք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական արդյունքին, կարող են ներառնվելու տեղեկ. ժամը 17-18-ը դիմել ՀՀ լրացուցիչ տեղեկությունների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կասարովական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակությունից կարծիք, փաստաթղթի նախնական արդյունքի լույսը տեսի կունենա 2008 թ. սեպտեմբերի 5-ին, ժամը 16-ին Կասարովական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ լրացուցիչ տեղեկությունների կառավարման գործակալություն

www.
azg.am

ՕՄԵՆՈՒՅՈՒՄ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 18:00

Սիրելի հայրենակից,

-Պատերազմը Կովկասում եւ դրա հետեւանքները նոր իրավիճակ են ստեղծել մեր տարածաշրջանում:

-Ռազմական ճանապարհով հարցը լուծելու ձախողված փորձը ակնհայտ դարձրեց, որ եթե միջազգային հանրությունը չթացառի ուժի կիրառումը, արդյունքները անկանխատեսելի ցնցումներ կլինեն:

-Կացությունը փաստում է, թե նման դեպքերում որքան վտանգավոր է երկակի ստանդարտների կիրառումը:

-Հնարավոր զարգացումները ուղղակիորեն առնչվում են Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

-Մենք հանդգնված ենք՝ միջազգային հանրության կողմից Արցախի ժողովրդի ինքնորոշման եւ ազատ արտահայտման իրավունքի հարգումը այլընտրանք չունի:

Սիրելի հայրենակից,

Սեպտեմբերի 2-ը Լեռնային Ղարաբաղի անկախության օրն է:

Եկեք փաստենք, որ հայությունը Արցախի կողքին է:

Արցախը Հայաստան է: Մենք արդեն ունենք, երբ ուժեղ ենք ու միասին: Արցախը: Հայաստանը: Սփյուռքը:

ՀՅ Դաշնակցությունը հրավիրում է հանրահավաք - համերգի նվիրված Արցախի ազատության տոնին

Նաեւ առիթ՝ անկեղծ խոսակցության: Մեր խնդիրների, անելիքների, ներքին հարցերի մասին:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 18:00

The interdisciplinary "Center for European Studies in European and International Law at Yerevan State University" is looking for a highly qualified candidate with strong interest in EU affairs for the following positions:

Deputy Director of the Center.

Term: long-term
Duration: full time

Principal Duties and Responsibilities
1. Develops and implements the program plans and research resources of the Center, focusing on providing comprehensive access to resources supporting research and policy analysis in European Studies (Law, Economics, International relations and/or Political Science)
2. Works closely with Center staff and the Advisory Board members to oversee the organization of all Center trainings, and all activities in other program areas.
3. In the absence of the Director represents the Center and carries out liaison with academic institutions, governmental agencies, local NGOs and with relevant EU, NIS and international agencies and institutions. Establishes partnerships for the sustainability of the Center. Initiates and directs local fundraising efforts among prospective donors, carries out donor cultivation and appropriate follow-up activities
4. Develops and oversees regular production and updates of the Center outreach and PR materials
5. Other duties as assigned.

Education: Educational qualification should be to the level associated with the achievement of a master's degree or a Ph.D., preferably in the area of Economy, International Relations or Political Science (Knowledge in EU studies is an asset).

Experience: Professional experience may be in academic, international, government or private sectors.

Other: Fluency in written and spoken English and Russian is required (one or more other EU languages desirable), as well as strong computer skills, experience in organizing and conducting academic research, ability to work and communicate effectively in an interdisciplinary team, leadership abilities. Some knowledge in accounting is an asset.

Researchers of the Center in the fields of Economics, Law, International Relations and Political Science

Term: long-term
Duration: part time (20 hours per week)

Principal Duties and Responsibilities
1. Provide support for the development and implementation of program plans and research resources of the Center, focusing on providing comprehensive access to resources supporting research and policy analysis in European Studies
2. Carry out high quality research in European Studies (Law, Economics, International relations and/or Political Science)
3. Organize and carry out trainings for professionals in fields related to European Studies
4. Other duties as assigned.

Education: Educational attainment should be to the level associated with the achievement of a master's degree or a Ph.D. in economics, political science, international relations or law. (Knowledge in EU studies is an asset)

Experience in academic research is a must. Experience in international organizations is an asset.

Other: Fluency in written and spoken English and Russian is required (one or more other EU languages desirable), as well as strong computer skills, experience in organizing and conducting academic research, ability to work and communicate effectively in an interdisciplinary team.

All interested candidates may submit their CV, Letter of Motivation and List of Publications (where applicable) by email no later than 3rd of September, 2008 to eceilaw@cornet.am for the attention of Mariam Babayan

The interdisciplinary "Center of European Law and integration" at Yerevan State University is looking for highly qualified candidate with strong interest in EU affairs for the position of Fund Raiser and Grant Coordinator of the Center. The successful candidate will be employed as local long-term experts (part time: 20 hours per week) by the EU funded ECEILAW project at Yerevan State University.

Principal Duties and Responsibilities
1. Creatively research and identify the diverse sources for funding the Center
2. To write grant proposals and consult with Center Director for submitting to potential donors
3. To assist and train the Center staff for grant and proposal writing
4. To assist in organizing fundraising and public events, conferences, trainings and consultations
5. Other duties as assigned.

Education: Educational attainment should be to the level associated with the achievement of a master's degree or a Ph.D. in social sciences. (Knowledge in EU studies is an asset)

Experience in similar positions is a must and experience in international organizations is an asset. At least 2 years of demonstrable experience in fundraising in project management. (Several successful projects in a work history are an asset)

Other: Fluency in written and spoken English and Russian is required (one or more other EU languages desirable), ability to work and communicate effectively in an interdisciplinary team, as well as strong computer skills.

All interested candidates may submit their CV and Letter of Motivation by email not later than 5th of September, 2008 to eceilaw@cornet.am for the attention of Mariam Babayan

ՕՐԱԿԱՆ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍԵՔ՝ 58-29-60

Լուսանկարները՝ Արմեն Ղազարյանի, Արամ Ղազարյանի, Գագիկ Գրիգորյանի, Գեորգի Ալեքսանյանի, Գոռ Ավետիսյանի, Գոռ Ասատրյանի, Գոռ Գրիգորյանի, Գոռ Գրիգորյանի, Գոռ Գրիգոր